# ՀԱՅԱՑՔ ԻՍԼԱՄԻ ԳԵՂԵՑԿՈՒԹՅԱՆԸ

Հետևյալ աշխատությունը փաստացի նկարագրում է Իսլամի գեղեցկությունը, որը ակնհայտ է, սակայն աղավաղում են Իսլամի թշնամիները և սրտով կույր մարդիկ , ինչպես նաև կեղծ տեղեկատվությունը: Աշխատության մեջ տրված են որոշ գեղեցիկ օրինակներ Ղուրանից և Մարգարեյի

Պատումներից, որոնք արտահայտում են Իսլամի գեղեցկությունը և կենսական հրահանգները, որոնք արդի են մինչ օրս, ամեն վայրում և բոլորի համար: Ափսաության մեջ նկարագրում է Իսլամի հիմքերի, Ալլահի հրահանգների մասին, որոնք վերաբերում են մարդու յուրաքանչյուր բնագավառի կենսակերպին, լինի դա Սալաթ, Աղոթք, սնունդ, ըմպելիք, թե

վարք: Այն լույս է սփռում Իսլամի գթության և մարդասիրության վրա, որը ցավոք սրտի մեր օրերում աղավաղվում է: Ամեն դեպքում այն լուսավորում է նրանց, ովքեր թույլատրում են գիտելիքը թափանցել իրենց միտքը և սրտերը:

https://islamhouse.com/2775659

- ՀԱՅԱՑՔ ԻՍԼԱՄԻ ԳԵՂԵՑԿՈՒԹՅԱՆԸ
    - ՀԱՅԱՑՔ ԻՍԼԱՄԻ ԳԵՂԵՑԿՈՒԹՅԱՆԸ

- Տիրոջ Եզակիությունը
- ԽՈՐՀԵԼՈՒ ՄԻ ՔԱՆԻ ՆՇԱՆՆԵՐ
- ԴԱՍ ՔԱՂԵԼ ՆԱԽՈՐԴ ԱԶԳԵՐԻՑ
- ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՊԱՐԿԵՇՏ ԱՐԱՐՔ, ԵՐԿՐՊԱԳՈՒԹՅՈՒՆ Է
- ՊԱՐԶ և ԴՅՈՒՐԻՆ ԿՐՈՆ
- ԿՅԱՆՔԻ ԿԱՏԱՐՅԱԼ ՈՒՂՂԻ
- ԳԹԱՍՐՏՈՒԹՅՈՒՆ ԲՈԼՈՐ ԱԶԳԵՐԻՆ
- ԿՅԱՆՔԻ ԲՈԼՈՐ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ՉԱՓԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

- ՍՈՎՈՐԵԼՈՒ ՊԱՐԳևԸ և ԳԻՏԵԼԻՔԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄԸ
- ԿՐՈՆԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՏևՈՒՄ ԹԱՔՆՎԱԾ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
- ԳԵՂԵՑԿՈՒԹՅՈՒՆԸ ՄՅՈՒՍՆԵՐԻ ԱՉՔԵՐՈՎ
- ԲԱՐԻՔԸ և ՉԱՐԻՔԸ
- ԲԱՐԻՔԻ ՀՐԱՄԱՆՆԵՐ
- ՉԱՐԻՔԻ ԱՐԳԵԼՔՆԵՐԸ
- ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

# ՀԱՅԱՑՔ ԻՍԼԱՄԻ ԳԵՂԵՑԿՈՒԹՅԱՆԸ

Ալ-Արաբի Աբու Համզա

___TM

Թարգմանությունը:

EUROPEAN ISLAMIC RESEARCH CENTER (EIRC)

& Աննա Ռ. Հակոբ

հանձնաժողով: Ստուգող

Աբու Առամ

ՀԱՅԱՑՔ ԻՍԼԱՄԻ ԳԵՂԵՑԿՈՒԹՅԱՆԸ

## Ընտրյալ Կրոնը

Ամենաբարձրյալ Ալլահն ասաց.

«Այս օրը, Ես կատարյալ եմ դարձրել ձեր կրոնը ձեր համար և ավարտել եմ Իմ Շնորհը ձեզ և ընտրել եմ ձեզ համար Իսլամը, որպես ձեր կրոն»: (5:3)

Փաստացի, այս տարբերակը վերջինն է, որը հայտնվել է Մարգարե Մուհամմեդին (Խ.Ա.Ո.Ն ): Ավարտել է Ղուրանը և կատարյալ է դարձրել Իսլամը:Իսլամը ավարտուն և կատարյալ է և դրանից հետո ենթակա չէ լրացումների կամ կրճատումների:Լինելով հավերժ և տիեզերական, Իսլամական Օրենք, որն Ինքն Աստված,

Ալլահն է կերտել Ով տեղյակ է, թե ինչ է լավ մեզ համար բոլոր իրավիճակներում, առաձգական և հարմարվող է ժամանակի և վայրի փոփոխվող իրավիճակներին: Իսլամի կատարելությունը ապացույց է փաստի, որ Աստված. Ալլահը այն դարձրել է մյուս կրոններին գերագույն իշխող և գերակշռող: Մահմեդականների հանդեպ Աստծո շնորհը այն փաստի ապացույց է, որ Նա պարգևել է նրանց իրական ուղղորդություն, աջակցություն և պատիվ այս և Հետագա աշխարհներում: Նա նույնպես ընտրել է նրանց համար Իսլամը որպես իրենց կրոն, որովհետև այն Ճշմարիտ է և այդ իսկ

պատճառով Նա չի ընդունի մեկ այլ կրոն, բացառությամբ Իսլամի:

«Եվ, ով փնտրում է կրոն Իսլամից բացի, չի ընդունվի նրանից և գալիք կյանքում նա կլինի պարտվողների մեջ»: (3:58)

Իսլամը իր հետևորդներին բերում է երջանկություն այս աշխարհում և հավիտյան երանություն գալիք կյանքում: Իսլամը ուղղակի նշանակում է կատարյալ հնազանդություն Ալլահի Կամքին: Ուստի, իմաստով այն նույնն է, ինչ տրվել է Նոյին, Աբրահամին, Մովսեսին, Հիսուսին կամ Մուհամմեդին:Քանի որ ուղերձը, որին այն կոչում է նույնն է և

միության աղբյուրը Աստծո հայտնությունն է.

«Նա կարգել է ձեզ նույն կրոնը, Իսլամը, որը Նա պատվիրել է Նոյին և այն ինչ Մենք հայտնել ենք ձեզ և ինչ Մենք պատվիրել ենք Աբրահամին, Մովսեսին և Հիսուսին. Այսինքն, որ դուք պետք է ամուր լինեք կրոնի մեջ և չբաժանվեք ներսում»: (42:13)

Հին Գրերի կոռուպցիայից հետո, Ղուրանը երկակի նպատակով հանդես եկավ. Առաջինը հաստատել ճշմարտությունը և բնօրինակ ուղերձը, այսինքն, Իսլամը և երկրորդ, վկայել այդ, հաստատելով ճշմարտությունը և

մերժելով կեղծիքը, որը ժամանակի ընթացքում եկան հին Գրեր: Մահմեդականներին պետք է հավատան այս Գրերին և ոչ մի տարբերություն չդնեն դրանց և Մարգարեների միջև, ովքեր բերեցին այդ, որովհետև նրանք բոլորն էլ գալիս են Մեկ Ճշմարիտ Աստծուց.

««Ասա, օվ Մուհամմեդ, Հրեաներին և Քրիստոնյաներին, «Մենք հավատում ենք Ալլահին և այն ամենին, ինչ ուղարկել է մեզ և ինչ ուղարկել է Աբրահամին, Իսմայելին, Իսահակին, Հակոբին և Ալ- Ասբաթին[1] և ինչ տվել է Մովսեսին և Հիսուսին և ինչ տվել է Մարգարեներին, իրենց

Ցիրոջից: Մենք ոչ մի տարբերություն չենք դնում նրանցից որևէ մեկի միջև և Նրան ենք մենք հնազանդվում, Իսլամում»»: (2:13)

Տվյալ Գրերից մի քանիսը, գոյություն ունեն մինչ օրս, սակայն ոչ բնօրինակով, ի շնորհիվ մարդկանց լրացումների և հեռացումների: Ղուրանը հանդիսանում է միակ Աստվածային Գիրը, որը դիմակայել է ժամանակի փորձությանը առանց որևէ փոփոխության, որովհետև այն Աստծո, Ալլահի Ճշմարտությունն է և Ճշմարտությունը երբեք չի մարում կամ նվազում:

«Այն, ինչ Մենք հայտնել ենք քեզ, (ով Մուհամմեդ Խ.Ա.Ո.Ն), Գրքից, (այսինքն Ղուրանից), Ճշմարտությունն է, որը հաստատում է այն, ինչ հայտնվել է դրանից առաջ»: (35:31)

Ճշմարտությունը, որը Ղուրանն է պարունակում, երբեք վտանգի չի ենթարկվի, որովհետև Ալլահը Իր վրա է վերցրել պահպանության պատասխանատվությունը.

«Իրոք, Մենք ուղարկել ենք Հիշեցում, (այսինքն Ղուրան) և Մենք անշուշտ կհսկենք այդ կոռուպցիայից»: (15:9)

«Իրոք, այն հանդիսանում է պատվելի բարձրագույն

հզորությամբ լավ հաստատված գիրք ,որովհետև Ալլահի Խոսքն է և Նա այդ պահպանել է կոռուպցիայից: Ոչ մի կեղծիք չի կարող մոտենալ դրան մինչ և հետո, այն սահմանվել է Ամենաիմաստունի կողմից, Արժանի ամբողջ գովասանքին»: (41:41-2)

Այնպիսի Գրերը ինչպիսիք են Հին Կտակարանը և Ավետարանը, որոնք հայտնվել են Մարգարե Մուհամմեդի (Խ.Ա.Ո.Ն) գալուստից առաջ, գրառվել են հայտնություն ստացած Մարգարեների մահից շատ ավելի ուշ: Ի հակադրություն, ամբողջ Ղուրանը լիովին գրառվել է

արմավենիների, ոսկորների և մագաղաթների վրա Մարգարեի (Խ.Ա.Ո.Ն) կյանքի ընթացքում: Բացի այդ, Մարգարեի տասնյակ հազարավոր ուղեկցորդներ նվիրվում էին հայտնության ընթացքում հիշել այն: Մինչ այժմ աշխարհի միլիոնավոր մարդկանց հիշատակում, ընթերցում և ուսուցանում են Ղուրանը իր բնօրինակ, արաբերեն լեզվով: Փաստացի, Մահմեդականների յուրաքանչյուր հաջողակ սերնդի հետ, անհավանական աճում է նրանց քանակը, ովքեր հավատարիմ են հիշատակելու ամբողջ Ղուրանը: Պատմության մեջ գոյություն չունի, կրոնական, կամ մեկ այլ գիրք, որին

համահավասար հոգացություն տրված լինի:

Հավերժական հոգացությունը, որով վավերականորեն գրառել են Իսլամի չաղավաղված ուսմունքը և որը դարերի ընթացքում ներկայացրել են, Իսլամի ուղերձի տիեզերականության և Մարգարե Մուհամմեդի (Խ.Ա.Ո.Ն) Մարգարեության վերջնական լինելու պարզ ապացույց են: Այժմ, Ղուրանը մատչելի է իր բնօրինակ ձևով, առանց որևէ փոփոխության: Ղուրանի կատարյալ ներկայացումը նշում է Իսլամի ներկայացումը: Այդ իսկ պատճառով, Ղուրանի մեջ Ալլահն ասում է .

« Իրոք, միակ ընդունելի կրոնը Ալլահին, Իսլամն է»: (3:19)

## Տիրոջ Եզակիությունը

Իսլամը կոչ է անում հավատքի, որ տիեզերքի Արարիչը Մեկը և Եզակին է առանց գործընկերոջ: Նրա բնույթը այնքան վեհ է, որը հեռու է մեր սահմանափակ գաղափարներից: Նա սոսկ վերացական փիլիսոփայություն չէ: Բոլոր արարածները վկայում են Նրա Գոյությունը և ոչ ոք համեմատելի չէ Նրան: Կառուցվածքի միությունը և արարման հիմնական փաստը և տիեզերքի գոյությունը հայտարարում է Նրա

Եզակիությունը: Նա Հավերժ է, առանց սկիզբ և ավարտ, Կատարյալ, Ով չունի սահմանափակում վայրով, ժամանակով կամ իրավիճակով: Նա ամբողջ տիեզերքի Արարիչը, Սնուցողը և Ծրագրավորողն է: Ոչ ոք չունի երկրպագության իրավունք, բացառությամբ Նրա: Նա ունի Ամենագեղեցիկ Անունները և Ամենամեղմ Ածականները: Նրա Գիտելիքը տարածվում է ամբողջ տեսանելիին և անտեսին, ներկային և ապագային, հեռու և մոտիկին: Նրա Շնորհը և Գթասրտությունը անսահման են: Նա Ամենազորը, Ամենաիմաստունն է.

««Ասա. «Նա Ալլահը Մեկն, է, Ալլահը Հավերժ, Կատարյալ, Նա չի ծնում ,ոչ էլ Նա ծնվում է և ոչ ոք հավասար կամ համեմատելի չէ նրան»»: (112:1-4)

«Գոյություն չունի ոչինչ, Նրա նմանությամբ և Նա Ամենալսող և Ամենատեսն է»: (42:11)

«Նա Առաջինն է, (ոչինչ գոյություն չունի Նրա առջև), Վերջինը, (ոչինչ գոյություն չունի Նրանից հետո), Ամենաբարձրայլը, (ոչինչ գոյություն չունի նրանից վեր) և Ամենամոտը, (ոչինչ գոյություն չունի ավելի մոտ քան Նա): Եվ Նա ունի ամենի կատարյալ գիտելիք»: (57:3)

«Նա Ալլահն է, Որից բացի ոչ որ չունի իրավունք երկրպագության, անտեսանելիի և տեսանելիի Ամենագիտակը: Նա Ամենաողորմած, Ամենագթասիրտն է: Նա Ալլահն է ,Որի կողքին ոչ որ չունի իրավունք երկրպագության, Արքան, Սուրբը, Մեկը Ազատ ամեն արատներից, ապահովության Ընձեռնողը, Իր արարածներին Դիտողը, Ամենահզորը, Հարկադրողը, Գերագույնը: Փառք լինի Ալլահին, Բարձրյալ է Նա ամենից, ինչ նրանք միավորում են Նրան:Նա Ալլահն է, Արարիչը, ամենի Հայտնագործողը, յուրաքանչյուր ձևի ներկայացնողը:Նրանն է պատկանում Լավագույն

Անունները:Այդ ամենը երկինքներում և երկրի վրա փառաբանում են Նրան:Եվ, նա Ամենազոր և Ամենաիմաստունն է»: (59:23-4)

« Եվ նրանք վերագրում են կեղծորեն առանց գիտության որդիներ և դուստրեր Նրան: Թող Նա փառաբանվի: Քանի որ Նա վեր է այն բանից, ինչ նրանք վերագրում են Նրան: Նա երկիրքների և երկրի Արարիչն է: Ինչպե'ս կարող է Նա որդի ունենալ, երբ Նա չունի կին: Նա արարել է ամենը և նա ունի կատարյալ գիտելիքներ ամենի:Այսպիսին է Ալլահը, ձեր Տերը: Ոչ ոք չունի իրավունք

երկրպագության. բացառությամբ Նրա, ամենի Արարիչի: Այսպիսով, երկրպագեք Նրան, Միայն: Եվ նա ունի իշխանություն տնօրինելու բոլոր գործերը: Ոչ մի տեսլական չի կարող հասկանալ Նրան, սակայն Նրա Հասկացությունը բոլոր տեսլականների վրա է: Նա Ամենավսեմ, Քաջատեղյակն է»: (6:100-3)

Տաուհիդը կամ միաստվածությունը սահմանում է Իսլամի ուսմունքի իմաստը:Նա նշում է, որ գոյություն ունի տիեզերքի Մեկ Գերագույն Տեր: Նա աշխարհի և մարդկության Ամենազորն ու Պահպանողն է: Միասնությունը հազեցնում է

ամբողջ տիեզերքը: Ալլահի բոլոր արարածները վկայում են Նրա Եզակիությունը: Սա կարելի է տեսնել Նրա Կամքի բացարձակ հնազանդությամբ: Օրվա անդադար հաջորդականությունը և գիշերը ամենականոնավոր ձևով, արևի ուղղությունը, լուսինը և հզոր աստղերը, չորս եղանակի անդադար փոփոխությունը, ամբողջ տիեզերքի գործողությունը, որը ներառում է ամենահաստատուն տարրերը ամենաճշգրիտ և համակարգված կերպով: Փաստացի, տիեզերքի ամենահոյակապ հրաշալիքները և ազդեցիկ հրաշքները նման են բաց գրքերի, որոնք պատմում են

մեզ Մեծ Արվեստագետի, Ալլահի Իմաստության, Հզորության, Մեծության և Աստվածային հմտությունների մասին:

## ԽՈՐՀԵԼՈՒ ՄԻ ՔԱՆԻ ՆՇԱՆՆԵՐ

Ինչպես կարող է մարդ պահպանել չհոգնող բնության ստեղծագործությունը, նրա նպատակայնությունը, բարոյական օգտակարության ներկայացումը և հասարակական վնասների կործանումը և ձախողել նկարագրել եզրակացությունը, որ հանդիսանում է բնության ետևում գոյություն ունեցող

ամենահազեցված միտք: Միտքը, որի անդադար ստեղծագործ գործունեությունը մշակում է բնությունը և արտաքին արտահայտումն է: Աստղերը ցրված են անսահման տիեզերքում, բնության հսկայական տեսարանը իր գեղեցկությամբ և գրավչությամբ, լուսնի կանոնավոր փայլեցումը և փոքրացումը, եղանակների զարմանալի ներդաշնակությունը և օրերն ու գիշերները, ջրի անդադար պաշարը, նուրբ ծաղիկները և մեր ոտքերի բյուրեղները – ամբողջը նշում են մեկ փաստ, գոյություն ունի Աստված, Արարիչ, Կառավարիչ: Մեկ ականատես ենք լինում

տիեզերքի զարմանահրաշ անթերի ծրագրին, արդյո'ք այն կարող է գոյություն ունենալ առանց Ծրագրավորողի: Մենք տեսնում ենք անհամար գեղեցկությունը և ներդաշնակությունը իր գործողությամբ, կարո՞ղ են արդյոք նրանք գոյություն ունենալ առանց Արարչի: Մենք պահում ենք բնության գեղեցիկ բարդ ձևավորումը, արդյո՞ք այն կարող է գոյություն ունենալ առանց Ձևավորողի: Մենք զգում ենք ֆիզիկական և մարդկային գոյության վեհ նպատակ, արդյո՞ք այն կարող է գոյություն լինել առանց Կամքի, որը գործում է ետևում:Մենք գտնում ենք, որ

տիեզերքը հանդիսանում է զարմանալիորեն գրված, հոյակապ արկած է, արդյո՞ք այդ կարող է գոյություն ունենալ առանց Հեղինակ: Իրոք, Աստված ասում է.

«Օվ, մարդկություն, երկրպագեք ձեր Տիրոջը, Ով արարել է ձեզ և նրանց, ովքեր ձեզանից առաջ էին, այնպես, որ դուք ի վիճակի լինեք դառնալ ողջամիտ: Ով դարձրել է երկիրը հանգստյան վայր ձեզ համար և երկինքը ամպհովանի և ուղարկել է արձրև երկինքներից և դրանից բերել է պտուղներ ձեզ սնուցելու: Ապա, մի սահմանեք մրցակիցներ Ալլահին, քանի դուք

գիտեք ճշմարտությունը»: (2:21-3)[2]

Ալլահն ունի ամբողջական հզորություն, կատարյալ կամք և ավարտուն, կատարյալ գիտելիք: Նա ապահովել է մարդ արարածներին տիեզերքի անհրաժեշտ ապացույցներով և այնպես, որ նրանց համար հայտարարություն լինի փաստը, որ Նա հանդիսանում է իրական Աստվածը և ուստի, նրանք պետք է երկրպագեք Նրան և լավագույնս իրենց պարտքը ուղղորդեն դեպի Նա :

Նրա նշանները տարածված են ամենուր և մեր և ամբողջ

տիեզերքի մեջ: Ղուրանի շատ տարբերակներում Նա մեզ խրախուսում է օգտագործել մեր պատճառաբանության ունակությունը, այնպես, որ մենք ի վիճակի լինենք ընկալել Նրա Մեծությունը և Իմաստությունը: Երբեմն, Նա մեր ուշադրությանն է գրավում Պատճառականության Սկզբունքը, որը Նա հաստատել է տիեզերքում.

« Արդյո՞ք նրանց արարել են ոչնչից, կամ արդյո՞ք նրանք իրենք են իրենց արարիչները»: (52:35)

Այս Տարբերակը առանց որևէ կասկածի նշույլի անգամ, պարզորոշ հերքում է անհիմն

մեղադրանքները, որ մարուն արարել են ոչնչից, կամ, որ նա է իր իսկ արարիչը:

Նույնիսկ մարդիկ, առանց որևէ պաշտոնական կրթության, ճանաչում են այն սկզբունքը, որ աշխարհում յուրաքանչյուր բան ունի իր Արարիչը: Անապատի սրտում ապրող մի բեդվինի հարցրեցին. «Ո՞րն է Ալլահի գոյության քո վկայությունը»: Նա պատասխանեց «Կղղանքը ուղտն է անում, ոտնահետքերը ոտքերը: Ի՞նչ կասեք երկնքի և իր հզոր համաստեղությունների, լեռների և իրենց անցումների, օվկիանոսների և իրենց հզոր ալիքների մասին, արդյո՞ք դրանք

չեն վկայում Իմաստուն, Ամենազոր Աստծո գոյությունը»:

Մեկ այլ ժամանակ, Նա հրավիրեց մեզ խորհելու երկրի և երկինքների հրաշքների մասին.

«Արդյո՞ք նրանց արարել են ոչնչից կամ արդյո՞ք նրանք են իրենց արարիչները: Կամ արդյո՞ք նրանք արարել են երկինքները և երկիրը: Ոչ, նրանք չունեն որևէ հաստատուն հավատք»: (52:35-6)

««Ասա. « Տեսեք ամենը ինչ երկինքներում և երկրի վրա է, «սակայն ոչ նշանները, ոչ էլ զգուշացնողները օգուտ չեն նրանց, ովքեր չեն հավատում»»: (10:101)

Տվյալ Տարբերակները առաջարկում են, որ զննելով երկինքների և երկրի հիասքանչ ձևավորված արարումը, մենք կարող ենք հասկանալ Արարչի մեծությունն ու իմաստությունը: Եթե, ամեն դեպքում, մենք թույլ տանք զննումների ձիրքերը, հասկացությունը և հավատքը մահանան, Ալլահի նշանները Իր արարման, կամ պարզ խոսքերով, որը Նրա Մարգարեները ջանասիրաբար պայքարել են փոխանցել, այլևս կամքը երբեք չի հասնի մեզ այնպես, ինչպես խոսքը հասնում է խուլ մարդուն:

Մեկ այլ ժամանակ, Նա ներկայացնում է երկինքների

հոյակապ արարման և այնտեղ գտնվող հրաշալի առարկաների խոսքի և ինտուիցիայի ձիրքը, որը նրանք պարունակում են.

« Օրհնյալ է Նա, Ով արարել է համաաստեղությունները երկինքներում և տեղադրել է այնտեղ լամպեր, այսինքն, արև և լուսին, որը լույս է տալիս»: (25:61)

« Այդ Նա է, Ով ստիպում է արևին լուսարձակել ուժեղ լույս և լուսինին արտացոլել շողքը և սահմանել է նրա աստիճանները, որ դուք ի վիճակի լինեք իմանալ տարիների քանակը և ժամանակի հաշվարկը»: (10:5)

«Նա պատճառ հանդիսացավ օրվա ավարտի և Նա գիշերը դրածրեց հանգստի համար և արևը և լուսինը հաշվարկի համար»: (6:96)

«Արդյո՞ք նրանք չեն դիտել երկինքը իրենց վերևում, ինչպես ենք Մենք արարել այդ և զարդարել և գոյություն չունի այնտեղ ոչ մի հոսք»: (50:6)

«Եվ արդյո՞ք նրանք չեն դիտել երկինքների թագավորությունը և երկիրը և ամենը ինչ արարել է Ալլահը»: (7:185)

«Այդ Նա է, Ով արարել է յոթ երկինքներ մեկը մյուսի վրա: Ոչ մի անհամապատասխանություն չեք

կարող տեսնել Ամենաբարերարի արարածների մեջ: Ապա դիտեք կրկին, Արդյո՞ք դուք կարող եք տեսնել որևէ խոխորատ: Կրկին շրջեք ձեր հայացքը երկրորդ անգամ. ձեր հայացքը միայն կվերադառնա ձեզ խճճված և հոգնած»: (67:3-4)

Վերջին Տարբերակը ակնհայտ է դարձնում, որ Ալլահի արարածները ինչպես ներկայացվում են տեսանելի աշխարհում, որքան էլ մոտիկ մենք զննենք,անթերի են, Մենք ոչ մի թերություն չենք գտնի Ալլահի ձեռքի աշխատանքի մեջ: Մեր իշխանության տակ է, որ մենք գտնենք ձախողում, որպեսզի

անցնենք որոշակի սահման: Այս Տարբերակը, ինչպես նաև մյուս տարբերակները, նույնպես մեզ հրավիրում են ուսումնասիրել և զննել արտաքին աշխարհը այնքան բոպեական, որքան թույլ է տալիս մեր իշխանությունը:

Որոշակի ժամանակ, Նա մեր ուշադրությունն է դարձնում խորհել երկրի և տարբեր բույսերի մասին.

« Եվ, երկրի մեջ գոյություն ունեն բազմազան գոտիներ, որոնք միավորում են միմյանց և խաղողի այգիներ և դաշտեր, որոնք սերմանում են եգիպտացորեն և արմավի ծառեր, որոնք աճում են

միակ արմատներից կամ հակառակը, նրանց ջրում են միևնույն ջրով, և դրանցից մի քանիսը Մենք գերադաս ենք համարում սնվելու համար, քան մյուսները: Այստեղ, իրոք, նշաններ են մարդկանց համար, ովքեր հասկանում են»: (13:4)

Մենք կարող ենք տեսնել տարբեր և միևնույն տեսակի բույսեր, որոնք սնվում են նույն որակի ջրով, սակայն, պտուղը, որը նրանք տալիս են ,բոլորովին տարբեր է մեկը մյուսից համով, գույնով և հոտով:

«Այստեղ է, իրոք, նշանը»: (26:67)

Մեկ այլ համատեքստում Նա հրավիրում է մեզ անրադառնալ ջրին, որը Նա ուղարկում է երկնքից և որը, եթե լիներ Նրա Կամքը, Նա կարող էր դարձնել դառը և խմելուն անպիտան:

« Եվ, Մենք ուղարկում ենք ջուր երկնքից, ըստ չափերի և Մենք պատճառ ենք հանդիսանում, որ այն ներծծվի հողի մեջ և Մենք իրոք, ի վիճակի ենք ցամաքեցնել այն հեշտությամբ»: (23:18)

Երբեմն, Նա նշում է Իր Եզակիությունը և անթերի կառավարումը և ամբողջ տիեզերքի գործերի դասավորությունը: Հաշվի

առնելով մեր տիեզերքի ձևավորման միությունը և նպատակը, աստվածների բազմաքանակությունը ընկալունակությունից վեր է.

« Ալլահը չի վերցրել Իրեն որդի, ոչ էլ գոյություն ունի աստված Նրա հետ, այդ դեպքում, յուրաքանչյուր աստված կարող էր վերցնել այն, ինչ նա արարել էր և նրանցից ոմանք իրոք, մյուսներից գերադաս կլինեին: Փառք Ալլահին, վեր բոլորից, ինչ նրանք վերագրում են Նրան»: (23:91)

Մեկ այլ Տարբերակ պերճախոսորեն հայտնում է.

« Եթե նրանց մեջ, այսինքն երկինքներում և երկրի վրա ,գոյություն ունենաին այլ աստվածներ, բացառությամբ Ալլահի, ապա, իրոք երկուսն էլ կկործանվեին: Ապա, փառք լինի Ալլահը, Գահի Տերը, վեր այն բանից, ինչ նրանք վերագրում են Նրան»: (21:22)

Ալլահի նշանները ամենուր են: Ղուրանը լի է գեղեցիկ նկարագրող Տարբերակներով, որոնք կոչ են անում մեզ անրադառնալ այս հոյակապ, անթիվ նշաններին, խնդիրներով, որոնք հասնում են Նրա գոյության փաստին: Ղուրանը ասում է.

« Նրա նշաններից է, որ Նա արարել է ձեզ փոշուց և այնուհետ դիտեք, դուք մարդիկ եք ցրված հեռու և լայնատարած: Եվ Նրա նշաններից է, որ Նա արարել է ձեզ համար զույգեր, ձեր միջից, որ դուք ի վիճակի լինեք բնակվել խաղաղությամբ նրանց հետ և Նա դրել է սեր և գթություն ձեր սրտերում: Իրոք, այնտեղ են նշաններ նրանց համար, ովքեր անրադառնում են: Եվ, Նրա նշաններից են երկինքների և երկրի արարումը և տարբերությունները ձեր լեզուների և գույ ների: Իրոք, այնտեղ են նշաններ նրանց համար, ովքեր գիտեն: Եվ նրա նշաններից են քունը, որ դուք

վերցնում եք գիշերը և ցերեկը և որոնումները, որ դուք անում եք ապրելու համար Մեր առատաձեռնությունից: Իրոք, այնտեղ են նշանները նրանց համար, ովքեր լսում են: Եվ, Նրա նշաններից, Նա ցույց է տալիս լուսավորում, և վախի և հույսի ուղղով և Նա ուղարկում է անձրև երկնքից և դրա հետ այն տալիս է կյանք երկրի վրա, այն բանից հետո,երբ այն մահանում է, Իրոք, այնտեղ են նշանները նրանց համար, ովքեր իմաստուն են: Եվ Նրա նշաններից են, որ երկինքը և երկիրը կանգնում է Իր Հրամանով: Այնուհետ, երբ Նա կոչում է ձեզ միակ կոչով երկրից, դիտեք, ձեր ուղղին մոտիկ է:Նրան

է պատկանում ամեն արարած, որոնք երկինքներում և երկրի վրա են: Բոլորը հավատարմորեն հնազանդվում են Նրան»: (30:6-20)

« Նա արարել է երկինքները առանց որևէ սյուների, որ դուք ի վիճակի լինեք տեսնել, Նա սահմանել է երկրի վրա լեռներ ,որոնք կանգնած են ամուր, որի շողքը պետք է ցնցվի ձեր հետ և Նա տարածել է դրանց միջոցով տարբեր տեսակի կենդանիներ: Մենք ուղարկել ենք անձրև երկնքից և երկրի վրա արարել ենք յուրաքանչյուր տեսակի առաքինի արարած զույգերով: Նմանատիպ է Ալլահի արարածը: Այժմ, ցույց

տվեք Ինձ, այլ բան, որ գոյություն ունի, բացառությամբ ինչ Նա է արարել: Ոչ, սակայն մեղսագործները բացահայտ սխալ են»: (31 :10-1)

« Ալլահն է, Ով պատճառ է ցորենի հատիկի աճին և ամսաթվին, երբ քարը ճեղքվում և բողբոջում է:Նա է պատճառը, որ կենդանին տարանջատեն մահացածից: Եվ Նա է Մեկը, ով տարանջատում է մեհացածին կենդանուց:Այդ է Ալլահը, ապա ինչպե՞ս եք դուք մոլորվում ճշմարտությունից: Նա է բաժանում օրը խավարից: Նա է դարձնում գիշերը հանգստության և հանգստի համար և արևը և լուսինը ժամանակի հաշվարկի,

այսպիսին է դատաստանը և հրամանը Նրա, Բարձրյալ Հզորությամբ, Ամենագետը: Նա է, Ով արարել է աստղերը ինչպես փարոս ձեր համար, որպեսզի դուք ի վիճակի լինեք ուղղորդել ինքներդ ձեզ, իրենց օգնությամբ, երկրի և ծովի խավար տարածությունների մեջ: Մենք մանրամասնում ենք Մեր նշանները մարդկանց համար, ովքեր տեղյակ են: Նա, Ով արարել է ձեզ մեկ հոգուց, այնուհետ գոյություն ունի հանգստավայր և շտեմարան: Մենք մանրամասնել ենք Մեր նշանները մարդկանց համար, ովքեր հասկանում են: Նա է, Ով ուղարկում է անձրև երկինքներից,

և Մենք արտադրում ենք բոլոր տեսակի բուսականություն, մի քանիսից Մենք արտադրում ենք կանաչ հացահատիկ, որից Մենք արտադրում ենք բարդ հացահատիկ արմավենուց և նրա շաղիկների տարափից գալիս են արմավենու բույլերը կախվելով ցածր և մոտ, և այնուհետ գոյություն ունեն խաղողի և զեյթունի այգիներ և նռան, յուրաքանչյուրը նման իր տեսակով, սակայն տարբեր բազմազանությամբ, երբ նրանք սկսում են բերքը, հրճվանք պատճառեք ձեր աչքին պտուղով և հասունությամբ: Դիտեք, այստեղ ենք նշանները մարդկանց

համար, ովքեր հավատում են»: (6:95-99)

## ԴԱՍ ՔԱՂԵԼ ՆԱԽՈՐԴ ԱԶԳԵՐԻՑ

Ղուրանը ոչ միայն հրավիրում է մեզ խորհելու Ալլահի նշանները, սակայն, նույնպես տալիս է պատմության դասերի պատկերացում, գտնելով նախկին ազգերի ավարտը, ովքեր ժխտել են Հավատքը և հետևել են իրենց ցանկություններին և քմահաճույքները: Այն մեզ հրավիրում է խորհելու այն մասին, թե ինչպես թագավորությունները և կայսրությունները, որոնք մի

ժամանակ ծաղկում էին, հասել են իրենց իսկ կործանմանը, Ալլահի Օրենքի անհնազանդության արդյունքում:

«Արդյո՞ք նրանք չեն ճամփորդում երկրով մեկ և տեսնել, իրենց նախորդների ավարտը, ովքեր չարիք են գործել: Ալլահը նրանց կործանել է լիակատար և բերել նմանատիպ ճակատագիր նրանց, ովքեր ժխտում են Ալլահին»: (47:10)

«Արդյո՞ք նրանք չեն ճամփորդել երկրով մեկ և տեսել իրենց նախորդների ավարտը: Նրանք գերազանցում էին նրանց հզորությամբ, նրանք մշակում էին

հողը և բնակվում էին մեծ քանակությամբ, քան այժմ, նրանց մոտ են եկել իրենց Մարգարեները պարզ նշաններով, որոնք նրանք ժխտել են, մինչ իրենց կործանումը, Ալլահը չի մոլորեցրել նրանց, սակայն նրանք են մոլորեցրել իրենց իսկ հոգիները»: (30:9)

« Արդյո՞ք նրանք չեն ճամփորդել երկրով մեկ, այնպես, որ իրենց սրտերը և միտքը ի վիճակի լինի ուսուցանել իմաստությունը և իրենց ականջները ի վիճակի լինեն ուսուցանել ունկնդրելու: Իրոք, աչքերը չեն, որ կույր են, սակայն սրտերը, որ գտնվում են

իրենց կրծքավանդակի մեջ»: (22:46)

« Արդյո՞ք սա չի ուսուցանում նրանց դաս, թե ինչպես շատ սերունդներ, որոնք Մենք կործանել ենք նրանցից առաջ, ում բնակավայրերում նրանք հիմա քայլում են: Իրոք, դրանք են նշանները: Արդյո՞ք նրանք այնուհետ չեն ունկնդրի»: (32:26)

Ակնհայտ պատմություններից մեկը, որը անընդհատ նշում է Ղուրանը, Մովսեսի և փարավոնի պատմությունն է: Փարավոնը շատ համառ և դաժան կեղեքիչ էր, ով ստրկացնում էր Իսրայելցիներին և ժխտում էր

ընդունել ճշմարտությունը, որը նրան էր ներկայացնում Մովսեսը, մյուս բազմաթիվ պարզ նշաններով: Նրա ունեցվածքը և շքեղությունը ոչինչ էր նրան, երբ գալիս է Ալլահի վճիռը: Կարմիր ծովում խեղդվելիս,Ղուրանը ասում է նրան.

« Այս օրը մենք փրկելու ենք քեզ քո մարմնի մեջ, որ դու նշան լինես նրանց, ովքեր հաջորդելու են քեզ: Սակայն, իրոք, մարդկության մեծամասնությունը անփույթ են Մեր նշաններին»: (10:92)

Ալլահի Կամքն է, որ փարավոնի երկրային մնացորդները մնան մարդկանց ինչպես նշան:

Մումիայի մարմնի նյութական ներկայությունը, ով ճանաչում էր Մովսեսին և դիմադրում էր նրա հայտարարությանը, մինչ այժմ մեր հետ է:

Պատմությունները, որոնք նշում է Ղուրանը ժամանցի համար չեն, այլ անդրադարձի: Ղուրանն ասում է.

« Նրանց պատմությունների մեջ գոյություն ունի ուսուցում մարդկանց համար, ովքեր օժտված են հասկանալու ունակությամբ»: (12: 111)

Ղուրանը հրահանգում է Մարգարեյին Խ.Ա.Ո.Ն կապել

նմանատիպ պատմությունները նույն նպատակի համար.

«Այսպիսով կապեք պատմությունները, միգուցե նրանք կարող են անդրադառնալ»: (7:176)

## ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՊԱՐԿԵՃՏ ԱՐԱՐՔ, ԵՐԿՐՊԱԳՈՒԹՅՈՒՆ Է

Աստված, Ալլահը արարել է ամբողջ աշխարհը իմաստալից նպատակի համար: Նա աննպատակ ոչինչ չի արարել.

«Եվ Մենք չենք արարել երկինքը և երկիրը և ամենը, ինչ նրանց միջև են, աննպատակ»: (38:27)

Արարումը անհիմն սպորտի կամ խաղի համար չէ, ինչպես Ղուրանը նշել է շատ Տարբերակների մեջ, Ալլահը թաքցրել է լուրջ նպատակ.

« Ես արարել եմ ջինը և մարդկությունը, որպեսզի նրանք երկրպագեն Ինձ»: (51:56)

Հետևյալ Տարբերակը նշում է, որ Աստված, Ալլահը արարել է մարդ արարածը և ջինը, որպեսզի նրանք երկրպագեն Նրան: Մերօրյա շատ մարդիկ, այդ թվում մահմեդականներ, կարծում են, որ երկրպագությունը սահմանափակվում է միայն կրոնական ծեսերով, ինչպիսիք են աղոթքը, բարեգործությունը և

պահքը:Սա ինչ որ չափով աղավաղում է երկրպագության իմաստը, որ տեղ չունի Իսլամում: Քանի որ Իսլամի ուսմունքը ընդգրկում է կյանքի բոլոր բնագավառները, բոլոր մարդկային արարքները համարվում են երկրպագության արարքներ, եթե դրանք արվում են միայն հանուն Ալլահի և ըստ Նրա Աստվածային Օրենքի և Նրա Վերջին Մարգարեյի ուսմունքների: Իսլամը խրախուսում է առաքինի դրդապատճառները և պատվելի մտադրությունները, բոլոր արարքների ետևում և առատորեն պարգևատրում է

նրանց: Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

«Արարքները պայմանավորված են մտադրություններով և յուրաքանչյուր անհատ կունենա այն, ինչ մտադրվել է»: (Ալ Բուխարի և Մուսլիմ)

Վերոհիշյալ երկու դեպքերը նման են "կախարդական գավազանի", որը վերածում է օրինական գործելակերպը երկրպագության մեծ արարքների: Եթե, օրինակ, որևէ մեկը սնվում է առողջ լինելու համար, Ալլահի հանդեպ իր պարտավորվածությունները իրագործելու մտադրությամբ, եղբայրների և իր հանդեպ Ալլահի

սահմանած ձևերով, անպատճառ նմանատիպ լավ մտադրության համար կստանա մեծ պարգև:

Պարկեշտ արարքը, որը չի ներառում արգելված գործողություններ, ինչպիսիք են ստելը և մարդկանց խաբելը, երկրպագություն է սնվելը և ըմպելը հզորություն ստանալու նպատակով, որպեսզի ավելի լավ երկրպագել Ալլահին, համարվում է երկրպագության գործողություն; նույնիսկ սեռական հարաբերությունը կնոջ հետ երկրպագության գործողություն է: Մեկ անգամ Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց իր Ուղեկցորդներին.

« Դուք պարգև կստանաք նույնիսկ, երբ դուք ներգրավված եք ձեր կնոջ հետ սեռական հարաբերության մեջ»:

Աշխահար Ուղեկցորդները հարցրեցին. «Ինչպե՞ս մենք կարող ենք պարգև ստանալ բավարարելով մեր սեռական ցանկությունները»: Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց նրանց. « Եթե դուք բավարարում եք ձեր ցանկությունները անօրինական ճանապարհով, արդյո՞ք դուք մեղք չեք գործում»: Նրանք պատասխանեցին. « Այո », «Նմանապես», նա ասաց, «բավարարելով այդ օրինական ճանապարհով ձեր կանանց հետ

դուք, պարզև կստանաք»: (Մուսլիմ)

Երկրպագությունը համապարփակ է և ներառում է տարբեր բաներ, որը շատերը սխալմամբ ենթադրում են աննշան: Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

« Ընդունել ձեր մահմեդական եղբորը ժպիտով բարեգործության մի տեսակ է, որևէ մեկին օգնել կենդանին հեծնել բարեգործության տեսակ է և հարևանի դույլի մեջ ջուր դնելը, բարեգործության տեսակ է »: ( Ալ-Բուխարի)

«Մի համարեք բարի որևէ արարք աննշան, նույնիսկ, եթե դուք ընդունում եք ձեր Մահմեդական եղբորը ժպիտով»: (Ալ-Բուխարի)

« Բարիքի յուրաքանչյուր գործողություն, փաստացի բարեգործական գործողություն է»: ( Ալ-Բուխարի)

Հիմնական իմաստով, Իսլամի մեջ երկրպագության գաղափարը համապարփակ է այնքան ժամանակ, որքան նշված են վերոհիշյալ երկու պայմանները: Տվյալ միտքը Մահմեդականի սիրտը մեծ ուրախությամբ է լցնում, երբ նա գիտակցում է, որ իր բոլոր արարքները

երկրպագության գործողություններ են: Տվյալ միտքը հանդիսանում է մի կապ, որը Մահմեդականին օգնում է գիտակցաբար կրել բոլոր արարքները Ալլահի Հաճույքը ստանալու համար, անկախ նրանից նա մենակ է, կամ իր գերադասներով, որովհետև նա տեղյակ է, որ նրան անընդհատ դիտում է Միակը, Ով Ամենատեսն է: Ոչ նինջը, ոչ էլ քունը չի պարուրում Նրան:

## ՊԱՐԶ և ԴՅՈՒՐԻՆ ԿՐՈՆ

Իսլամը շատ պարզ կրոն է հավատքների և գործելակերպի հստակ շարքով: Նույնպես, այն

շատ հեշտ կրոն է: Ղուրանը ասում է.

« Նա, Ալլահը կրոնի մեջ չի դրել ձեր վրա որևէ դժվարություն»: (22:78)

Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասում է.

«Այս կրոնը, Իսլամը շատ հեշտ է և նա, ով իրեն ծանրաբեռնում է իր կրոնի մեջ, ի վիճակի չի լինի շարունակել այդ կերպ: Այսպիսով դուք չպետք է լինեք ծայրահեղական, սակայն փորձեք մոտ լինել կատարելությանը…» (Ալ-Բուխարի)

Աիշան (Խ.Ա.Ո.Ն), Մարգարեյի կինը, ասաց.

« Երբ Ալլահի Մարգարեյին (Խ.Ա.Ո. Ն) հնարավորություն էր տրվում ընտրել երկու բաների միջև, նա միշտ ընտրում էր հեշտ և ավելի հարմար բաները»: (Ալ-Բուխարի)

Իսլամը համոզում է իր հետևորդներին, որ Ալլահը կընդունի նրանցից միայն այն պարտավորությունները, որ նրանք ունակ են ներկայացնելու: Ղուրանը ասում է.

« Ոչ մի հոգու վրա Ալլահը չի դրել բեռ ավելի մեծ, քան այն կարող է կրել»: (2:286)

Իսլամը թույլատրում է անհատին կյանքի տարբեր պայմաններում

մարտնչել և ուստի ապահովում է ավելի լավ և հեշտ այլընտրանքներ իր հետևորդների համար: Պարզաբանելու համար, մենք հաշվի կառնենք երկու օրինակ. Սալաթ, աղոթքը, Իսլամի մեջ համարվում է անվավեր առանց լվացման,Վուդույի: Մահմեդականը պետք է լվացում կատարի լվանալով իր մարմնի որոշ մասերը ջրով: Ամեն դեպքում, տվյալ պահանջը որոշակի իրավիճակներում կարելի է փոխարինել Թայամմում –ով, կամ ձեռքերը և դեմքը մաքուր փոշով, ավազով կամ հողով սրբելով: Ղուրանը ասում է.

«Ով, դուք, ովքեր հավատում եք: Երբ դուք մտադրվում եք Սալաթ, աղոթք ներկայացնել, լվացեք ձեր դեմքը և ձեր ձեռքերը նախաբազուկից մինչ արմունկը; տրորեք անց կացնելով թաց ձեռքերը ձեր գլխով և լվացեք ձեր ոտքերը մինչ կոճերը: Եթե դուք գտնվում եք ծիսական անմաքրության վիճակում, որի պատճառ կարող է լինել սեռական արտազատումը, լվացեք ձեր ամբողջ մարմինը: Սակայն, եթե դուք տկար եք, կամ ճամփորդում եք, կամ որևէ մեկը եկել է բնության կանչը պատասխանելուց հետո, կամ հարաբերություն է ունեցել կնոջ հետ և դուք ջուր չեք գտնում,

ապա, վերցրեք մաքուր ավազ կամ հող և տրորեք ձեր դեմքը և ձեռքերը: Ալլահը չի ցանկանում դնել ձեզ դժվարության մեջ, սակայն մաքրել ձեզ և լրացնել իր շնորհը ձեզ, որ դուք ի վիճակի լինեք երախտապարտ լինել»: (5:6)

Որևէ կարիք չկա ավարտել պահքը, եթե որևէ մեկը կերել կամ ըմպել է մոռանալով կամ սխալմամբ կամ ստիպողաբար կամ սպառնալիքի ներքո: Ալլահն ասում է.

«Սակայն ,եթե որևէ մեկը ստիպված է, անհրաժեշտությունից ելնելով, առանց անհնազանդության ցանկության,

ոչ էլ ոտնահարելով սահմանները, ապա նա անմեղ է»: (2:173)

Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասում է.

« Ով մոռանալով սնվում կամ ըմպում է պահքի ժամանակ, պետք է շարունակի պահքը, քանի որ Ալլահն է, ով սնել է նրան ավել նրան ըմպելիք»: (Ալ Բուխարի և Մուսլիմ)

«Որևէ մեկը, ով հաղթահարել է փսխումը պահքի ընթացքում»: (Ալ-Հակիմ)

«Իմ հետևորդներին, Մահմեդականներին ներում են ոչ մտադրված սխալը, մոռացությունը և այն, ինչ նրանց

ստիպել են հակառակ իրենց կամքի անել»: (Ալ- Տաբարանի)

## ԿՅԱՆՔԻ ԿԱՏԱՐՅԱԼ ՈՒՂՂԻ

Իսլամը կյանքի համապարփակ ուղղի է: Այն տարածվում է կյանքի բոլոր բնագավառներում, ցույց տալով, թե ինչպես վարվել մարդկային բոլոր գործունեությունների հետ, ինչեղ և առողջարար կերպով: Այն թույլ չի տալիս վանականների հիերարխիա կամ միջնորդներ Աստծո և մարդկային արարածների միջև, ոչ մի հեռավոր վերացություն և ոչ մի բարդ ծեսեր և ծիսակատարություններ: Բոլորը

կարող են հերշտությամբ հասկանալ Ղուրանը և հնարավորինս հետևել Մարգարեյին (Խ.Ա.Ո.Ն), համոզված լինելով Ալլահից, որ Նա կընդունի յուրաքանչյուր հոգուց այնպիսի պարտավորվածություն, որը համապատասխանում է նրա հնարավորություններին.

« Ոչ մի հոգու վրա Ալլահը չի դնում բեռ ավելի մեծ, քան կարող է կրել»: (2:285)

Երբ մենք ընթերցում ենք Ղուրանը կամ Մարգարեական սովորույթները, մենք գտնում ենք հրահանգներ կյանքի բոլոր

բնագավառներից, քաղաքական, հասարակական, տնտեսական, նյութական, էթիկայի, ազգային և միջազգային: Այս հրահանգները ապահովում են մեզ բոլոր մանրամասներով, որոնք անհրաժեշտ են ներկայացնելու որոշակի գործողություններ: Մարգարեական սովորույթների արմատները այնքան խորն են, որպեսզի ցուցադրեն մեզ բոլոր քայլերը, որոնց հետևելու կարիքը ունենք մենք, նույնիսկ ինչպես օգտվել պետքարանից, աղաչանք մտնելուց և հեռանալուց, որ ձեռքը կիրառել մաքրելու համար և այսպես շարունակ: Այլ կերպ, Իսլամը կառավարում է Մահմեդականի կյանքը իր բոլոր

բնազավառներով: Այս է պատճառը, թե ինչու այն ոչ միայն կրոն է, այլ նաև կյանքի ուղղի:

Իսլամի չի ճանաչում կրոնի և կյանքի որևէ տարանջատում: Այն բացայահտ կերպով ժխտում է արևմտյան ասացվածքը. «Մատուցիր Կայսրին, ինչ Կայսերական է և Աստծոն ինչ Աստվածային է»; ամենը պետք է նվիրել միայն Աստծուն և Մահմեդականից պահանջվում է ամբողջովին հնազանդվել Ալլահի Կամքին իր բոլոր հարցերով.

«« Ասա. «Իրոք, իմ աղոթքը, իմ զոհաբերությունը, իմ կյանքը և մահը Ալլահի համար են,

աշխարհների Տիրոջ: Նա չունի գործընկեր, այս է ինձ հրամայված և ես նրանցից առաջինն եմ, ովքեր հնազանդվում են Նրա Կամքին»»: (6:162)

Իսլամը չի հավատում ցանկություններով լի մտածելակերպին: Այն պարզորեն նշում է, որ առաքինի վարքով պետք է հետևել Ալլահի հավատքին: Ղուրանը ասում է.

«Նրանց համար, ովքեր հավատում են և առաքինի արարքներ են գործում, պարգև է, որը երբեք չի ձախողվի»: (41:8)

«Նրանք, ովքեր հավատում և գործում են առաքինաբար,

իրճվանք է նրանց համար և երանության վայր, վերջնական վերադարձը»: (13:29)

## ԳԹԱՄՐՏՈՒԹՅՈՒՆ ԲՈԼՈՐ ԱԶԳԵՐԻՆ

Իսլամը տիեզերական կրոն է: Ինչպես ասում է Ղուրանը, Մարգարեներ էին եկել իրենց հարզարժան մարդկանցից, մինչ Մարգարե Մուհամեդի (Խ.Ա.Ո.Ն) գալուստը.

«Մենք իրոք, ուղարկել ենք քեզանից առաջ Մարգարեներ իրենց հարզարժան մարդկանցից և նրանք եկան նրանց մոտ պարզ նշաններով»: (30:47)

Մարգարե Մուհամմեդը (Խ.Ա.Ո.Ն) չի եկել որոշակի ցեղի, ռասսայի կամ մարդկանց համար, սակայն ամբողջ մարդկության, ինչպես ասում է Ղուրանը.

«Մենք ուղարկել ենք քեզ որպես ամբողջ մարդկության Մարգարե, տալով նրանց ավետիս և զգուշացում նրանց մեղքերի դեմ, սակայն մարդկանց մեծամասնությունը չգիտեն»: (34:28)

«« Ասա. «Ով, մարդկություն, ինձ ուղարկել են ձեր բոլորի համար, որպես Ալլահի Մարգարե, Ում պատկանում է երկինքների և երկրի իշխանությունը»»: (7:158)

« Մենք քեզ ուղարկել ենք որպես բոլոր ազգերի գթասրտությունն»: (21:107)

Ղուրանի այս և նմանատիպ այլ Տարբերակները նշում են փաստը, որ գոյություն չունի ռասսայի կամ ազգի որևէ խնդիր, "Ընտրայլների" կամ «Աբրահամի սերմի» կամ Դավիթի, Հրեաների կամ Հեթանոսների, Արաբների կամ ոչ Արաբների, սպիտակների կամ սևամորթների միջև: «Ամբողջ մարդկությունը» արտահայտությունը վերոհիշյալ Տարբերակի մեջ նշում է Իսլամի ուղերձի տիեզերական և հավերժ բնույթը:

Այստեղ պատեհ է նշել, որ մինչ Մուհամմեդը (Խ.Ա.Ո.Ն), բոլոր Մարգարեները եկել են որոշակի հրաշքներով, որպեսզի աջակցեն ուղերձը, որով Ալլահը ուղարկել էր նրանց: Այս հրաշքները համապատասխանում էր իրենց ժամանակաշրջանին և վայրին, որտեղ որ նրանց ուղարկել են: Մովսեսը ուներ ձող, որը երբ նա գցում էր, վերածվում էր օձի: Նա արեց այդ Փարավոնի ներկայությամբ, որպեսզի ապացուցի նրան և նրա մոգերին, որ նրան իրոք, ուղարկել է Աստված: Այս օձը արագ կուլ տվեց մոգերի պարանները, որոնք շարժվում էին օձերի պես: Նա, նույնպես այն կիրառեց չոր ուղղի

բացելու իր հետևորդների համար,Կարմիր Ծովով, դեպի Սինայի Թերակղզի: Նրանք ոտքով անցան, մինչ Փարավոնը, ով գալիս էր իր զորքով հետապնդելու, հեղեղվեց ծովում: Նա և նրա մարդիկ անհայտացան, մինչդեռ Մովսեսը և նրա հետևորդները ապահով անցան ծովը:

Հիսուս Քրիստոսը, Մարիամի որդին, ում ծնունդը նման էր հրաշքի,նույնպես ուներ որոշակի հրաշքներ, որոնք սահմանափակված են նրա ժամանակաշրջանով: Նա, Ալլահի թույլտվությամբ, կավից թռչնի կերպար էր պատրաստում և ոգի

էր փչում և այնուհետ այն դառնում էր իրական թռչուն մարմնով և արյամբ: Նա նույնպես բուժում էր կույրին և բորոտին, կենդանացնում էր մահացածին և տեղեկացնում մարդկանց այն մասին, թե ինչով են նրանք սնվում և պահում իրենց տներում, Ալլահի թույլտվությամբ:

Մարգարե Մուհամմեդը (Խ.Ա.Ո.Ն) նույնպես ուներ մի քանի հրաշք, ամենամեծը Առաքինի Ղուրանն է, որը մինչ այժմ իր բնօրինակով է և որը կշարունակի ուղղորդել մարդկանց և լուսավորել իրենց սրտերը և հոգիները մինչ Դատաստանի Օրը: Ղուրանը

Ալլահի Խոսքն է և ով, անկեղծորեն ցանկանում է իրական ուղղորդություն, պետք է ընթերցի և ուսումնասիրի Ղուրանը.

« Եթե գոյություն ունենար Ղուրան, որով լեռները կարող էին շարժվել, իրենց տեղից, կամ երկիրը կարող էր ճեղքվեր կամ մահացածին կարողանային ստիպել խոսել, այս կլիներ մեկը»: (13:31)

Ղուրանը չունի մութ անկյուններ կամ անորոշ արտահայտություններ: Այն խոսում է պարզորեն և ճիշտ ուղղու է ուղղորդում: Այն ուղիղ է,

պարզ և հասկանալի: Այնտեղ ոչ մի շփոթմունք չեք գտնի.

« Փառք լինի Ալլահին, Ով ուղարկել է Իր ծառային, այսինքն, Մոըհամմեդին (Խ.Ա.Ո. Ն) Գիրք և չի թույլատրել այնտեղ ոչ մի աղավաղում: Այն դարձրել է այն ուղղիղ և պարզ, որպեսզի Նա ի վիճակի լինի զգուշացնել անհավատներին սարսափելի պատժի մասին Նրանից և որ Նա ի վիճակի լինի տալ ավետիս հավատացյալներին, ովքեր առաքինի արարքներ են գործում, որ նրանք կունենան լավ պարգև, որտեղ նրանք կմնան հավերժ»: (18:1-2 )

Այն ուղղորդություն է բոլորին և նրանց, ովքեր ընդունել են այդ, գթասրտության աղբյուրը և փրկության ուղին: Ալլահը հրահանգում է մեզ անկեղծորեն փնտրել և հասկանալ դա.

«Արդյո՞ք այնուհետ, նրանք անկեղծորեն չեն փնտրի հասկանալ Ղուրանը, կամ արդյո՞ք գոյություն ունի փական նրանց սրտերին»: (47:24)

Այն չի նշանակում մեկ դասի կամ ռասսայի համար, այն տիեզերական է և հասցեագրված է ամբողջ աշխարհներին.

«Իրոք, այն ոչ պակաս քան ուղերձ է ամբողջ աշխարհներին»: (81:27)

Այն փաստը, որ այն մինչ այժմ մեզ հետ է իր բնօրինակով, Իսլամի տիեզերականության պարզ ցուցմունքը է:

## ԿՅԱՆՔԻ ԲՈԼՈՐ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ՉԱՓԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Իսլամը շեշտում է չափավորվածություն ամեն ինչում և հրահանգում է իր հետևորդներին խուսափել յուրաքանչյուր տեսակի շռայլություններից:Այն մեծ ուշադրություն է դարձնում մարդու հոգևոր բարեկեցությանը նույնպես, որքան նյութականին: Այն հրահանգում է իր

հետևորդներին իրենց պատրաստել Հետագա Կյանքի համար, միևնույն ժամանկ օրինականորեն վայելել իրենց կյանքի մասնաբաժինը, առանց ոտնահարելու սահմանները, որոնք հաստատել է Ալլահը:Ղուրանը ասում է.

«Փնտրիր, ունեցվածքի միջոցով, որը Ալլահն է շնորհել քեզ, Տուն Հետագա Կյանքում, ոչ էլ մոռացիր այս աշխարհի քո մասնաբաժինը»: (28:77)

Ալին (Խ.Ա.Ո.Ն), Աբու Թալիբի որդին, չորրորդ արդար առաջնորդող խալիֆն ասաց.

«Աշխատիր քո կյանքի համար, կարծես դու պատրաստվում ես ապրել հավերժ և աշխատիր քո Հետագա Կյանքի համար, կարծես դու պատրաստվում ես մահանալ վաղը»:

Երբ ավարտվում է աղոթքը, հավատացյալներին խրախուսում են անցնել իրենց աշխատանքին.

« Եվ, երբ աղոթքը ավարտվում է, ապա տարածվեք երկրով մեկ և փնտրեք Ալլահի Առատաձեռնությունը և հիշեք Ալլահին հաճախ, որպեսզի դուք ի վիճակի լինեք բարգավաճել»: (26: 10)

Իսլամական վարքը անաչառ և իրական չափավորվածություններից մեկն է և Ղուրանը Մահմեդականներին արդար ազգ է կոչում.

«Ուստի Մենք դարձրել ենք ձեզ արդար և լավագույն ազգը, արդարորեն հավասարակշռված»: (2:143)

Ի տարբերություն մյուս կրոնների և գաղափարախոսությունների, Իսլամը չի շեշտում հոգևորը, ի վատնում նյութականի և հակառակը: Հակառակը այն բերում է երկուսին ել ներդաշնակության: Իսլամը գովում է չափավորվածությունը

կրոնական պարտականությունները հետևելու ընթացքում և խստորեն մեղադրում է ծայրահեղությունները: Երկրպագության մեջ միջինը հետևելը լավագույն այլընտրանքն է ինչպես նաև մեր Արարչի նկատմամբ մեր պարտականությունների կատարման ճանապարհը:Իսլամը արգելում է մեզ պարտականություններով գերծանրաբեռնել, որոնք հանդիսանում են կրոնից ետ պահելու կապը: Այն պատվիրում է մեզ կատարել մեր պարտականությունները ըստ հնարավորությունների և մեր

լավագույն ունակությունների: Ղուրանը ասում է.

« Ալլահը ձեզ համար հեշտություն է մտադրվել և Նա չի ցանկանում ձեզ համար դժվարեցնել»: (2:185)

« Ոչ մի հոգու վրա Ալլահը չի դրել բեռ ավելին, քան նա կարող է կրել»: (2:286)

Աբդուլահ Իբն Ջաբիրը (Խ.Ա.Ո.Ն) ասաց. «Ես սովոր էի բոլոր աղոթքները ներկայացնել Մարգարեյի (Խ.Ա. Ո. Ն) ետևը կանգնած և ես նկատեցի, որ նրա աղոթքը չափավոր տևողության էր և նրա քարոզը նույնպես չափավոր տևողության էր»: (Մուսլիմ)

Ալ-Բուխարին և Մուսլիմը հաղորդում են, որ երեք մարդ եկան Մարգարեի (Խ.Ա.Ո.Ն) տուն տեղեկանալու նրա երկրպագության ձևի մասին: Երբ նրանց տեղեկացրեցին այդ, նրանք իրենց իսկ երկրպագությունը համարեցին չնչին և ասացին.բ«Մենք ոչ մի կերպ մոտ չենք նրա երկրպագության ուղղուն, մինչդեռ Ալլահը ներել է նրա անցյալ և ապագա մեղքերը»: Նրանցից մեկը ասաց. «Ես կներգրավվեմ բարեպաշտությանը ամբողջ գիշեր»: Մյուսը ասաց. «Ես պահք կպահեմ ամեն օր և երբեք օր բաց չեմ թողնի առանց պահքի»:

Երրորդը ասաց. «Ես հեռու կմնամ կանանցից և երբեք չեմ ամուսնանա»: Երբ Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) տեղեկացավ նրանց խոսքերին, նա կանչեց նրանց և ասաց. «Ալլահով, Ես վախենում եմ Ալլահից ավելի քան դուք բոլորդ և ես ձեզանից ամենաապարտականն եմ Նրան: Սակայն, ես երբեմն պահք եմ պահում և երբեմն, ոչ; ես Սալաթ, աղոթք եմ ներկայացնում գիերվա մի մասը և քնում եմ և ես կնության եմ առնում կանանց: Այսպիսով, ով շեղվում է իմ կյանքի ուղղուց, ինձանից չէ»:

Իսլամը իր հետևորդներին պատվիրում է վերցնել միջինը

գծուծության և շռայլության միջև, լինի դա ամենօրյա ծախսի, թե բարեգործության մեջ: Նրանք պետք է ունենան կատարյալ արդար աստիճան երկու ծայրահեղությունների միջև: Ղուրանը ասում է.

«Եվ թող ձեր ձեռքը կապված չլինի ինչպես գծուծ, ձեր պարանոցին, ոչ էլ առաջ տարված լինի առավելագույն հասանելությամբ, ինչպես վատնումը, որպեսզի չլինի թե դուք դառնաք հանցապարտ և աղքատ»: (17:29)

Ղուրանը նկարագրում է Ալլահի նվիրված ստրուկներին, որպես նրանց, ովքեր.

«Երբ վատնում են, ոչ շռայլում են, ոչ էլ գծում են, սակայն պահպանում են միջին ուղին երկու ծայրահեղությունների միջև»: (25:67)

Ղուրանը նույնիսկ կոչում է շռայլ վատնողներին "Սատանայի եղբայրներ" իրենց հիմարության պատճառով: Սատանան կործանվեց Ալլահի հանդեպ իր անշնորհակալության պատճառով, այսպիսով նրանք, ովքեր չափից շատ են գործածում կամ շռայլում Ալլահի նվերները, նույնպես անշնորհակալ են Նրան.

«Եվ տվեք բարեկամներին իրենց իրական իրավունքները և

աղքատներին և ճանապարհորդներին, սակայն մի շռայլեք ձեր ունեցվածքը վատնման կերպով: Իրոք, վատնողները Սատանայի եղբայրեն են: Եվ Սատանան հավերժ անշնորհակալ է իր Տիրոջը»: (17:26-7)

Անզգապություն գործելը կամ վատնելը խստիվ արգելվում է.

«Մի վատնեք ավելցուկը, քանի որ Ալլահի չի սիրում վատնողներին»: (6:141)

«Սնվեք և ըմպեք, սակայն մի վատնեք. Քանի որ Ալլահը չի սիրում վատնողներին»: (7:31)

Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

« Ադամի զավակները չեն լցրել 'տարրան' ավելի վատ քան նրանց ստամոքսները: Մի քանի պատառ բավարար կլինի նրանց համար պահպանելու հոգին և մարմինը միասին: Եթե նրանք ստիպված են, ապա նրանք կարող են թույլատրել երրորդը սնունդի, երրորդը ըմպելու և երրորդը հեշտ շնչելու համար»: (Ալ-Թիրմիզի և Իբն Մաջահ)

Ղուրանը մեղադրում է Հրեաներին և Քրիստոնյաներին անզսպության մեջ, որ նրանք գործել են իրենց կրոնում.

« Օվ, Գրքի Մարդիկ. Մի շռայլեք սահմանները, որոնք սահմանվել են ձեր կրոնի մեջ, ոչ էլ ասեք Ալլահի մասին, բացառությամբ ճշմարտությունը: Հիսուս Քրիստոսը, Մարիամի որդին, ոչ ավելին էր, քան Ալլահի Մարգարե և Նրա Խոսքը, որը Նա շնորհել էր Մարիամին և ոգուն, որը Նա էր արարել; այսպիսով հավատացեք Ալլահին և նրա Մարգարեյին: Մի ասեք 'Երեք, Երրորդություն' Դադարեք, ավելի լավ է ձեր համար:Քանի որ Ալլահը Մեկ Աստված է, փառք լինի Նրան: Բարձրյալ է Նա որդի ունենալուց: Նրան է պատկանում ամենը, ինչ երկինքներում և երկրում է: Եվ

բավարար է Ալլահը որպես գործերի Տնօրինող»: (4: 171)

## ՍՈՎՈՐԵԼՈՒ ՊԱՐԳԵՎԸ և ԳԻՏԵԼԻՔԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄԸ

Իսլամը բերեց Գիտելիք, երբ ամբողջ աշխարհը կլանված էր լիակատար տգիտության մեջ: Առաջին Տարբերակը, որը ստացել էր Մարգարեն Ալլահից հետևյալն էր.

« Կարդա, քո Տիրոջ Անունով, Ով արարել է ամեն գոյությունը: Նա արարել է մարդուն թանձրուկից, կենտրոնացած արյան կտորից: Կարդա և քո Տերը Ամենաառատաձեռն է, Ով ուսուցանել է գրել գրիչով: Նա

ուսուցանել է մարդուն այն, ինչ նա չգիտեր»: (96:1-5)

Այս տարբերակը առաջին կայծը ներկայացրեց, որը երբևէ առկայծել էր տգիտության խավարի մեջ, որի մեջ կլանվել էր աշխարհը: Այն մարդու մեջ արթնացնում է մտածելու ունակությունը և կոչ է անում նրան երկրպագել իրական Աստծուն: Գիտելիքի միջոցով է ,որ մենք կարող ենք ավելի լավ հասկանալ և ծառայել Ալլահին: Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց սովորույթի մեջ, որ Ալլահը չի սիրում տգիտությամբ երկրպագվել:Մահմեդականների առաջին սերունդը դարերի

տգիտության խավարի մեջ ընկղմված լինելուց հետո, մի քանի տարվա ընթացքում դարձավ ինչպես կրոնի, այնպես էլ աշխարհիկ խնդիրների գիտակ ազգը: Ալլահը Մահմեդականներին հիշեցնում է Իր անսահման շնորհները.

« Նա բարձրացրեց անգրագետ մարդկանց միջից Մարգարե իրենցից, ընթերցելով նրանց Իր Տարբերակները ,մաքրելով նրանց և ուսուցանելով նրանց Գիրքը և իմաստությունը: Եվ, իրոք մինչ այդ նրանք բացահայտ սխալի մեջ էին»: (62:2)

Գիտելիքը լինում է երկու տեսակի. Կրոնական, որը կապ ունի կրոնական պարտավորությունների հասկացության հետ, որը պետք է կատարել և ժամանակավոր, որը կապ ունի աշխարհիկ գործերի հետ: Մահմեդականը պետք է ձեռք բերի երկու տեսակն էլ: Կրոնական գիտելիքը պարտադիր է, որովհետև առանց դրա ի վիճակի չի լինի իրականացնել պարտադիր պարտականությունները սահմանված կերպով: Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

« Ալլահը Իսլամի գիտելիք կպարգևի նրան, ում համար

բարիք է Նա ցանկանում»: (Ալ Բուխարի և Մուսլիմ)

Իսլամը խրախուսում է գիտելիքի ձեռք բերումը և պարզաբանում է դրա մեծ պարգևը: Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

« Ալլահը Դրախտի ճանապարհը հեշտ է դարձնում նրա համար, ով քայլում է գիտելիքի փնտրտուքի Ուղիով»: (Մուսլիմ)

« Նա, ով առաջ է շարժվում գիտելիքի փնտրտուքով կլինի, Ալլահի ուղղում, մինչ իր վերադարձը»: (Աթ-Թիրմիզի)

«Նա, ով ուղղուն հետևում է գիտելիքի որոնումով, Ալլահը նրա

համար Դրախտի ուղղին կդարձնի հեշտ: Հրեշտակները իջեցնում են իրենց թևերը գիտելիք փնտրողի առջև, գոհ լինելով նրանով, ինչ նա անում է: Երկինքների և երկրի բնակիչները և նույնիսկ օվկիանոսների խորքերի ձկները թողություն են փնտրում նրա համար: Նվիրված երկրպագուի նկատմամբ ուսյալ անձի գերադասությունը նման է լուսնի և մնացած աստղերի նմանության: Ուսյալները Մարգարեների ժառանգներ են. Մարգարեները չեն կտակում դինար կամ դրհամ, սակայն միայն գիտելիք և նա, ով ձեռք է բերում այն, փաստորեն ձեռք է բերում հարուստ բաժին»: (Աթ-Թիրմիզի)

Օգտակար ժամանակավոր գիտելիքը նույնպես պարտադիր է և Մահմեդականներին խրախուսում են այն ձեռք բերել, որպեսզի օգտակար լինեն իրենց և մեևձավորների համար: Երբ վաղ Մահմեդականները հասկացան այս փաստը, նրանք գերազանցեցին այլ ազգերին և դարեր շարունակ կրեցին գիտելիքի կանթեղը: Ինչպես Թ. Ու. Ուալքանքը և Ա. Ծրիիը ասացին.

« Բժշկության, մաթեմատիկայի, աստղագիտության, քիմիայի և ֆիզիկայի Մահմեդականների ձեռքբերումները արժանի են առանձնակի ուշադրության: Լավ

սարքավորված հիվանդանոցները, սովորաբար կապված բժշկական դպրոցների հետ, գտնվում էին գլխավոր քաղաքներում: Այն ժամանակ, երբ սնոտիապաշտությունը դեռ խոչընդոտում էր բժշկության գործունեությանը արևմտյան երկրներում, Մահմեդական բժիշկները ախտորոշում էին հիվանդություններ, սահմանում էին բուժումներ և ներկայացնում էին առաջադեմ վիրահատություն… Միգուցե բոլոր բժիշկներից ամենամեծը 9-րդ դարի կերպար Ալ- Ռազին էր, ով Արևմուտքում հայտնի է Ռհազես անվանմամբ: Նա մի շարք գիտական

աշխատությունների հեղինակ է, որը ներառում է բազմակողմանի բժշկական հանրագիտարանը և կարմրուկի և կարմրախտի ռահվիրա ձեռնարկը: 10-րդ դարում բժիշկ Ավիցեննան, Իբն Սինան, կազմեց հսկայական Բժշկության Կանոնները, որըմինչ 17-րդ դարի վերջերը եվրոպական բժշկական շրջանակներում համարվում էր կայուն տեղեկագիրք… Կարևոր առաջընթացներ են արվել հանրահաշվի, վերլուծական երկրաչափության և հարթ գնդաձև եռանկյունաչափության ոլորտներում»:[3]

«Իսլամը խրախուսում և պաշտպանում է այն, ինչ կարող է օգտակար լինել որևէ մեկի հոգևոր կամ աշխարհիկ առաջխաղացմանը: Վերջին հաշվով ,ինչպես պարզաբանել է Իսլամի Մարգարեն, գիտելիքի ձեռք բերումը " պարտավորություն յուրաքանչյուր մահմեդական տղամարդու և կնոջ համար»: (Իբն Մաջահ)

Ալլահը պատվիրում է Մարգարեյին (Խ.Ա.Ո.Ն) խնդրել Նրան հաջողություն ունենալ գիտելիքում.

«« Ասա. «Օվ, իմ Տեր. Բարձրացրու ինձ գիտելիքի մեջ»: (20:114)

Փաստ է, որ Հավատքը Ալլահի առջև բոլոր մարդկանց դարձնում է հավասար, սակայն գոյություն ունի առաջնորդություն և դիրք և աստիճան, կապված ավելի մեծ կամ փոքր պարտականության հետ և որը հիմնված է իրական գիտելիքի և տեսանկյունի վրա, որն է, կրոնի գիտելիքը.

«Ալլահը կբարձրացնի աստիճանով ձեզանից նրանց, ովքեր հավատացել են և նրանց, ում գիտելիք են պարգևել»: (58:11)

# ԿՐՈՆԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՏևՈՒՄ ԹԱՔՆՎԱԾ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Արդարամիտ հետազոտողները և օբյեկտիվ դիտորդները ընդունում են փաստը, որ բոլոր Աստվածային հրամանները օգտակար են մարդկությանը և որ բոլոր Աստվածային արգելքները այս կամ այլ կերպ վնասակար են: Իսլամի կառավարման մոտիկ հայացքը խորաթափանց անհատին կլուսաբանի այս կրոնի մեծությունը և առաինքությունը: Իսլամը կոչ է անում առաքինության, ճշմարտության, ողջախոհության, արդարության,

լրցանելով ուխտը, պահպանելով վստահությունը, ցուցաբերելով բարություն որբերին և աղքատներին, պահպանելով հարևանությունը, պատվելով հյուրերին և չափավոր հաճույք ստանալով աշխարհիկ թույլատրելի հաճույքներից: Այն կոչ է անում առաքինության և բարեպաշտության և արգելում է մեղքը և կեղեքումը: Այլ կերպ, այն կոչ է անում ամենի, ինչ բերում է երջանկություն և արգելում է ամենը, ինչ կապված է ավերման և կործանման հետ:

Իսլամը տրամադրում է ավելի լավ այլընտրանք յուրաքանչյուր և ամենի ինչի համար, ինչ

հայտարարել է արգելված և անօրինական: Գուշակությունը աղեղներով, որպեսզի հավաստիացնեն բախտավոր և դժբախտ վայրկյանները կամ արդյոք անհրաժեշտ է գործել որոշակի արարքներ, թե ոչ, փոխարինել է Սալաթի, աղոթքի մեկ այլ ձևով, որը կոչվում է Սալաթուլ – Իսթիխարա: Այս աղոթքի ընթացքում անհատը անկեղծորեն աղոթում է Ալլահին, Ամենագետին և Իմաստունին, որպեսզի առաջնորդի նրան այն բանին, ինչը շահավետ է և հեռու պահի այն բանից, ինչ վնաս է: Վաշխառուական գործարքները փոխարինել է թույլատրելի, շահավետ առևտրի, ոգելից

խմիչքները համեղ, առողջարար ըմպելիքների, որոնք շահավետ են և մարմնին և հոգուն, նշվում են մի քանի օրինակներ:

Եթե մենք դիտենք բոլոր Իսլամական ուսմունքները, մենք անկասկած կգտնենք, որ Ալլահը, Ով գիտի, թե ինչն է լավ մեզ համար, չի արգելել մեզ որևէ բան, առանց ներկայացնելու նույն բնույթի ավելի լավ այլընտրանք: Ստորև մենք կնշենք Սալաթի, աղոթքի, Զաքյաթի, պարտադիր բարեգործության, պահքի, Հաջջի, ուխտագնացության և Ջիհադի, Ալլահի ուղղում պայքարի առավելությունները և գեղեցկությունը:

## Սալաթ, (աղոթք) - Եզակի Հոգևոր Փորձ

Սալաթը, (աղոթք), երկրպագության մեծ գործողություն է, որը ավելի մոտ է բերում իրենց Արարչին նրանց, ովքեր հետևում են: Այն հանդիսանում է եզակի հոգևոր փորձ, որտեղ մարմնի յուրաքանչյուր մկան միանում է հոգուն և մտքին ,Ալլահի փառաբանմանը և երկրպագությանը: Այն արմատավորում է անկեղծություն և կատարյալ նվիրվածություն նրանց սրտերում, ովքեր ներկայացնում են այդ: Այն ստիպում է նրանց

հնազանդությամբ կանգնել Ալլահի դիմաց, բարձրացնելով Նրան և խնդրելով: Նրանք սկսում են այդ ասելով «Ալլահու Աքբար», ընդունելով, որ Ալլահը Մեծ է, Ով Միայնակ բարձրյալ է և երկրպագելի: Այնուհետ, նրանք զբաղվում են գովաբանելով Նրան այնպես, որը համապատասխան է Նրա Մեծությանը: Նրանք իրենց ամբողջովին նվիրում են Նրան և ամբողջովին հնազանդվում են Նրա Կամքին, փնտրելով Նրա օգնությունը պահպանելու ճիշտ ուղղու վրա, որը բնորոշ է նվիրվածներին և բարեպաշտներին և պահպանել նրանց ուղղուց,, ովքեր շեղվել են և վաստակել են Նրա

բարկությունը: Երբ նրանք հասնում են երկրպագության գագաթնակետին Սալաթի ընթացքում, նրանց սրտերը խորապես լցվում են վախով և ակնածանքով, նրանք Նրա առջև տարածում են, դնելով մարմնի ամենապատվելի մասը գետնին, ցուցադրելով մեծ հնազանդություն և հպատակություն:

Սալաթի, աղոթքի գերազանցությունը անզուգական է և արժանիքները անսահման: Նրանք, ովքեր հետևում են դրան սահմանված կարգով, ընդունում են Ալլահի Մեծությունը և իրենց սրտերը ճաշակում են Նրա

երկյուղը և վախը, որը օգնում է խուսափել բոլոր մեղսալի արարքներից, պահպանելով օրվա մեջ հինգ անգամ իրենց Արարչի հետ ուղղակի համամիության հնարավորությունը: Այնուհետ զարմանալի չէ, որ Ղուրանը ասում է.

« Ներկայացրեք Սալաթ, աղոթք: Իրոք, Սալաթը սանձում է անհատի անպարկեշտությունից և բացահայտ չարիքը և Ալլահի հիշատակությունը, իրոք, մեծ արժանիք է»: (29:45)

Այն նրանց ուսուցանում է պահպանել ճշգրտությունը,

ինչպես նախատեսված է նշված անգամներ.

« Իրոք, Սալաթը պարտադիր է հավատացյալների համար, սահմանված ժամերի»: (4 :103)

Նաև, այն հանդիսանում է արիության և համբերության հարուստ աղբյուր և մեծ օգնություն դժվարությունների և դժբախտությունների ժամանակ: Ղուրանը ասում է.

« Եվ օգնություն փնտրեք համբերությամբ և Սալաթ, աղոթքով»: (2:45)

Երբ նրանք պարբերաբար պահպանում են այդ, նրանք մեծ

ցանկություն են զարգացնում կատարելու առաքինի արարքներ, ակնկալելով Ալլահի պարգևը Հետագա Կյանքում: Երբ նրանք աղոթք են անում միասին հավաքված, նրանք հաստատում են ամուր հասարակական հարաբերություններ միմյանց հետ և ամրացնում են եղբայրական կապերը այնպիսի որակներով, ինչպիսիք են սերը, մեղմությունը, հարգանքը և համագործակցությունը:

Զաքյաթ (պարտադիր Բարեգործություն) և Հասարակական Ֆինանսավորման անզուգական եղանակ

Սալաթից, աղոթքից հետո Զաքյաթը ամենակարևոր կրոնական պարտականությունն է, որը Մահմեդականների պարտքն է: Այն ենթադրում է կրոնական սրբություն, որի անզուգական է հասարակական ֆինանսավորման որևէ այլ եղանակից, որևէ այլ վայրում: Այս բացառիկ ուշագրավ հաստատության որևէ պատրաստի համարժեք բառը անգլերեն լեզվում գոյություն չունի: Ինչպես շատերը կարծում են, այն չի նշանակում միայն բարեգործության ձև: Բառը բազմակողմանի է և ներառում է մի շարք իմաստներ: Ինչպես

Համուդահ Աբդուլ- Աթին, ուղղակի ասում է.

«Այն ուղղակի բարեգործության ձև չէ, կամ ողորմություն կամ հարկ կամ տասանորդ: Ոչ էլ հանդիսանում է բարության պարզ արտահայտում, այլ այս ամենի միաձուլումն է և ավելին: Այն չի հանդիսանում ունեցվածքի որոշակի տոկոսի նվիրաբերություն, սակայն լի հարստացում և հոգևոր ներդրում: Այն չի հանդիսանում նաև ուղղակի կամավոր աջակցություն որևէ մեկին կամ որևէ դեպքին, ոչ էլ պետական հարկ, որից խորաթափանց խելացի անհատը կարող է

խուսափել: Հակառակը, այն պարտականություն է, որը պատվիրել է Ալլահը և Մահմեդականները հանձն են առել ,որպես ընդհանուր առմամբ հասարակության շահ… Այն միաձուլում է այս բոլոր իմաստները Աստծո մտահոգությունը և հոգևոր, ինչպես նաև բարոյական դրդապատճառները: Այդ իսկ պատճառով ,չի կարող գոյություն ունենալ որևէ համարժեք Զաքյաթ բառին, ի շնորհիվ Ղուրանի, Ալլահի Աստվածային Գրքի գերագույն իսկության»:[4]

Մահմեդական հասարակության մեջ Զաքյաթը ունի անթիվ

առավելություններ և հեռատես ազդեցություններ: Այն հանդիսանում է աղքատի կամ կարիքավորի հանդեպ կարեկցանքի պարզ արտահայտություն, որը օգնում է բավարարել իրենց կարիքները և լուծել պարտքերի խնդիրները: Արաբերենում Զաքյաթի գրական իմաստը մաքրություն է, այն մաքրում է ոչ միայն բարերարի սիրտը եսասիրությունից և ունեցվածքի ծարավից, այլև իր ունեցվածքը, քանի որ Ալլահը անկասկած կօրհնի և կավելացնի այն: Այն նույնպես մաքրում է ընդունողի սիրտը նախանձից, խանդից և ատելությունից և նպաստում է սրտի բարի կամքին

բարերարի նկատմամբ: Այն հավատացյալին ներշնչում է առաքինություն և մաքրում է նրա սիրտը ինքնակենտրոնացումից և ունեցվածքի գծուծ լինելուց: Այն հանդիսանում է շատ հասարակական հիվանդությունների և գծուծության հաստատուն բուժում: Ղուրանը ասում է.

«Եվ, ով փրկված է իր իսկ ագահությունից, այսպիսիները նրանք են, ովքեր հաջողություն կունենան»: ( 59:9)

Զաքյաթի վճարը համապատասխան ձևով ցույց է տալիս կոռուպացված այնպիսի

համակարգը, ինչպես կոմունիզմը կամ կապիտալիզը, որպես ոչ կարևոր, թույլատրելով խաղաղության և առաջխաղացման գերակայությունը:

Զաքյաթի գաղափարը ապահովում է հուսահատների օգնությունը և աջակցությունը համայնքի տնտեսապես ավելի քիչ ապահովված մասի բարեկեցությանը: Այն նույնպես չի խրախուսում գումարի և ապրանքների կուտակումը և ուստի հաստատում է երկուստեք աշխույժ շրջանառություն, հանգեցնելով առողջ տնտեսության:

Ղուրանը հստակորեն պատվիրում է, որ ունեցվածքը չի թույլատրվում կուտակել մի քանի ձեռքերում և որ այն պետք է պահել անընդհատ շրջանառության մեջ որպեսզի.

« Այն չդառնա հարստություն, որը օգտագործում են հարուստ մարդիկ ձեր մեջ»: (59:7)

Ձեռք բերելու համար հետևյալը, այն արգելում է տոկոսով գումար պարտք տալը, որի շնորհիվ մի քանի խելացի մարդիկ ի վիճակի են կենտրոնացնել համայնքի ունեցվածքի մեծամասնությունը և դրույթ է դարձնում ժառանգության պարտադիր

բաժանումը: Այն թույլ չի տալիս որևէ մեկին ամբողջ ունեցվածքը թողնել մեկ հոգու, մի քանի ժառանգների միջև և ավելացնել մեկ ժառանգի բաժինը մյուսի հաշվին: Զաքյաթի միջոցով այն փորձում է ունեցվածքի բաժանման հավասար հարմարեցում: Որպես առաջին գանձում, այն բոլոր կառավարություններին սահմանում է եկամուտներ և պարտավորության աղբյուրներ, որպեսզի ապահովի համայնքի աղքատ բաժնի բարգավաճումը և բարեկեցությունը: Այս իմաստով, այն ապահովում է բոլոր դասի մարդկանց տնտեսական բարգավաճումը:

Սաում (Պահք) օգնում է զարգացնել Ամուր Անհատականություն և Բնավորություն

Պահք պահելը, կամ Սաումը, եզակի բարոյական և հոգևոր Իսլամական հատկանիշ է: Նրա գեղեցկությունը և արժանիքները անսահման են: Պահքի թաքնված պատճառը Տակվայի ազնիվ կարգավիճակի, կամ բարեպաշտության կամ առաքինության հասնելն է, ինչպես ասում է Ղուրանը.

« Օվ դուք, ովքեր հավատացել են: Պահքը սահմանվել է ձեզ, ինչպես այն սահմանվել է նրանց համար,

ովքեր նախորդել են ձեզ, որպեսզի դուք կարողանաք դառնալ բարեպաշտ»: (2:183)

Պահքը հավատարիմ մարդկանց օգնում է զարգացնել ամուր անհատականություն և բնավորություն: Այն ներշնչում է նրանց կամքի և վճռականության ազնիվ հատկանիշ: Քանի որ, երբ անհատը պահք է պահում, անշուշտ ուսուցանում է կարգավորել անզուսպ ցանկությունները և դեմ է գնում մարմնական գայթակղություններին:

Այն նույնպես նրանց օգնում է զարգացնել առաքինությունը,

ցուցաբերելով կարեկիցանք աղքատների և ճնշվածների նկատմամբ, երբ անհատը պահք է պահում և անցնում է սովի ցավը, անշուշտ հիշում է աղքատների պայմանները և կսկիծը: Այն նույնպես հիշատակում է նրանց Ալլահի շնորհը, երբ նրանք սով են զգում պահքի ժամանակ, տվյալ հիշատակումը մղում է նրանց շնորհակալ լինել Նրան, Իր անսահման առատաձեռնության համար:

Նաև, Պահքը զարգացնում է համբերության արժանավոր հատկանիշը և սնուցում է մեղմ և հանդուրժեղ բնավորություն: Իսլամում, պարզևի չափով,

պահքը հավասար է համբերատարության կես պարգևին և համբերատարությունը իր հերթին հավասար է Հավատքի կես պարգևին: Մարգարեն ասաց.

«Ռամադանը համբերատարության և տոկունության ամիս է»:

Նույնպես, Պահքը վահան է հանդիսանում շատ ախտերի դեմ: Այն ապահովում է և հոգևոր և մարմնական աճը և համապատասխանությունը: Ամրացնում է մարմինը և հանդիսանում է շատ հայտնի հիվանդությունների ապաքինում:

Այն օգնում է հանգստացնել մարսողական համակարգը և ազատում է մարմինը կուտակված աղտոտիչներից, որոնք վնաս են առողջությանը:

Բացի վերոհիշյալ օգուտներից, այն նաև երկրպագության գործողություն է, որը վկայում է կատարյալ հնազանդություն և հպատակություն Ալլահին: Դժվարությունը, որը անհատը հանդուրժում է կրելով այս պարտականությունը՝ չնչին է ի համեմատություն առաքինի նպատակի, որը ձգտում է ձեռք բերել, որի անունն է Ալլահի Հաճույք և մեծ պարգև Հեռագա Կյանքում:

Իսլամական Պահքի հետ կապված առանձին պարտականությունն է նաև, որ բացի որոշակի ժամերին սնունդի, ըմպելիքի և սեռական հարաբերությունների ձեռնպահությունից, Մահմեդականը պետք է ջանքեր գործադրի հասնելու առաքինության և մաքրության բարձր չափանիշների: Պահքի դասերից մեկը մեզ ուսուցանում է, որ անհատը, ով ձեռնպահ է մնում թույլատրելի բաներից պահքի ընթացքում, չպետք է տարվել այնով, ինչ անթույլատրելի է:

Իրոք, Ռամադան ամիսը նման է կրթական հաստատության, որը սնուցում է մաքրությունը և առաքինությունը: Քանի որ, երբ Մահմեդականը պահք է պահում նա ոչ միայն ձեռնպահ է մնում սնունդից, ըմպելիքից և օրինական սեռական հարաբերությունից, այլև մեծ ջանք է իրագործում իր ուժերի ներածին չափով խուսափել բոլոր չար արարքներից, որոնք կապված են պահքի անվավերության հետ: Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

«« Եթե ձեզանից մեկը պահք է պահում, նա չպետք է կիրառի անպարկեշտ լեզու կամ հիմարաբեր և լկտիաբար

վերաբերվի և եթե որևէ մեկը կռվում կամ չարաշահում է նրան, նա պետք է ասի, «Ես պահք եմ պահում, ես պահք եմ պահում»»: (Ալ-Բուխարի և Մուսլիմ)

«Ով չի ձեռնպահ մնում նենգ ճառերից և գործողություններից, պահքի ընթացքում, Ալլահը կարիքը չունի թողնելու նրան իր սնունդը և ըմպելիքը»: (Ալ-Բուխարի)

Հաջ, (Ուխտագնացություն), Պարտավորություն Անհաշիվ Արժանիքներով

Հաջը մեկ այլ մեծ պարտավորություն է, որը ունի անհաշիվ արժանիքներ: Այն

հանարվորություն է տալիս հանդիպել և ճանաչել միմյանց, փոխանակել տեսակետներ և համեմատել փորձը և միավորել իրենց ջանքերը լավագույն բարիքի համար նրանց, ովքեր ներկայացնում են այդ:

Հաջը մաքրում է հոգին և սնուցում է այնպիսի առաքինի հատկանիշները ինչպիսիք են մեծահոգությունը, տոկունությունը և համեստությունը: Նրանց,ովքեր ներկայացնում են այդ, պատվիրված է խուսափել բոլոր տեսակի թուլություններից և պահպանել համբերատարություն

և հաստատակամություն:
Ղուրանը ասում է.

«Հաջը լուսնային տարվա հայտնի ամսվա ընթացքում է: Այսպիսով, ով մտադրված է ներկայացնել այն, թող չլինի որևէ լկտիություն, թուլություն կամ վիճաբանություն Հաջիի ընթացքում»: ( 2:197 )

Այն հանդիսանում է Իսլամի տիեզերականության առողջարար ներկայացումը: Այն օգնում է միավորել անհամար մրցակցություն երկրի չորս անկյուններից, որպեսզի ամբողջ հնազանդությամբ երկրպագել մեկ եզակի Աստծուն, մեկ հատուկ վայրում, հատուկ եղանակի

ժամանակ:Հեռավորությունները ոչնչացված են; Ռասսայի և գույնի շեղումները դրված են մեկ կողմ. հավատքի այս եղբայրության մեջ, որը միավորում է բոլոր Մահմեդականներին մեկ մեծ եղբայրության մեջ: Մահմեդականներին թվում է, որ նրանք բոլորը հավասար հիմքի վրա են:

Նույնպես, Հաջը երկրով մեկ ճանապարհորդելու լավ հնարավորություն է ապահովում, որպեսզի ճանաչել մարդկանց և նրանց սովորույթները և ավանդույթները և նույնպես հայտագործել հայտնության երկիրը, որտեղից Մարգարեները

և Առաքյալները կոչ են արել երկրպագել միայն Ալլահին:

Հաջը նույնպես հիշատակում է Հարության Օրը, երբ բոլոր մարդ արարածները հավասար կկանգնեն աշխարհների Տիրոջ առջև դատաստանի համար բոլկոտն, մերկ և անթլպատ: Այն նույնպես ծառայում է առաքինի նպատակի, ապահովում է վերջնական ճանապարհորդությունը ապագա աշխարհ, Հետագա: Քանի որ անհատը չի կարող ապահովել այսպիսի դրույթներ, բացառությամբ այս կյանքում: Ղուրանը ասում է.

«Եվ, ապահովեք ձեզ անհրաժեշտ նախապատրաստություններով և իրոք, լավագույն դրույթը արդարությունն է»: (2:197)

Նույնպես, Հաջը բացում է աչքերը և մահվան նկատմամբ միտքը արթուն է պահում: Քանի որ մեկ անգամ, մենք ենթադրում ենք Իհրամի վիճակը, (վիճակ, որի ընթացքում թույլատրվում է իրագործել որոշակի արարքներ, որոնք օրինական են այլ ժամանակ: «Ումրան և Հաջը» այս իրավիճակում ներկայացնում են, երկու կտոր անկար հագուստ, որոնք միակն են կրելու համար), այս տեսքով մենք փաստորեն ձեռբազատվում ենք կյանքի

հագուստներից և կրում ենք հանգուցյալի պատան հիշեցնող երկու կտոր անկար հագուստ: Սոսկ այս միտքը դրդում է մեզ ջանասիրաբար ձգտել Հետագա Կյանքի պատրաստմանը:

Մահը հիշելու կարևորությունը մեծ է և շատ օգտակար: Օգուտները անհամար են: Ոչ ոք չի փախչի մահից և փաստացի, ամբողջ մարդկությունը կկանգնի Ալլահի առջև հաշվի համար: Ղուրանը ասում է.

«Յուրաքանչյուր հոգի կճաշակի մահ և միայն Դատաստանի Օրը ձեզ կվճարեն լիակատար հաշվարկ: Միայն նա, ով փրկվում

է Կրակից և մտնում է Այգի, հաջողակ կլինի: Քանի որ այս աշխարհի կյանքը խաբեության իր է և շարժական»: (3:185)

Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) նկարագրեց մահը սարսափազդու պայմաններով. «հաճույքների Ավիրող»: Սույն այս միտքը արթնացնում է մարդուն առաքինի գործերի, Ալլահի Հաճույքը ստանալու համար: Կյանքը փորձարկման շրջան է, որից հետո բոլորը պետք է տեսնեն, թե ինչ են գործել:Իրոք, այն հոսող, խաբուսիկ ցուցադրություն է, որին չպետք է վստահել:

Մահ հիշելը, անշուշտ մեզ օգնում է ուղղել մեր ուղղիները և ջանք գործադրել կատարել առաքինի բարի արարքներ և խուսափել չար արարքներից: Մենք բոլորս մարդ արարածներ ենք, ովքեր տեղյակ են բազմազան օգուտներից: Մահը հիշելով, արդարությունը անշուշտ հեշտ կլինի կառավարել և խաղաղությունն ու բարգավաճումը անշուտ կգերիշխի: Հաջը ապահովում է տվյալ հնարավորությունը:

Ջիհադ, (Պայքար հանուն Ալլահի) միակ ուղղին արմատահան անել անարդարությունը

Ջիհադը, (մարտ կամ պայքար Ալլահի ուղղում), ունի անհամար առավելություններ: Այն ծառայում է Ալլահի կրոնի հաղթանակին և Նրա հավատարիմ ստրուկներին: Այն ծառայում է բարձրացնել մարդկությունը կենդանիների դասից, որոնք զուրկ են բանականության ունակությունից: Ղուրանը ասում է.

« Շատ են ջիները և մարդիկ, որոնց Մենք պատրաստել ենք Դժոխքի համար, նրանք ունեն սրտեր, որոնց միջոցով նրանք չեն հասկանում և նրանք ունեն աչքեր, որոնց միջոցով նրանք չեն տեսնում և նրանք ունեն

ականջներ, որոնց միջոցով նրանք չեն լսում: Նրանք նման են խոշոր եղջերավոր անասունների, ոչ նրանք ավելի մոլորված են: Նրանք իրոք, անփույթ են»: (7:179)

Նույնպես, Ջիհադը տալիս է նրանց, ովքեր մասնակցություն են ցուցաբերում, առաքինի կյանք այս աշխարհում և երանություն հավերժություն:Եթե նրանք հաղթանակ են կրում իրենց թշնամու հանդեպ,նրանք բարձրացնում են Ճշմարտության դրոշը բարձր, մյուս կողմից, եթե նրանք սպանվում են պայքարի մեջ, նրանք անկասկած ձեռք են բերում ճշմարիտ, իրական կյանք,

որի համեմատ այս աշխարհի վաղանցիկ կյանքը ստվեր է:
Ղուրանը ասում է.

«Մի մտածեք նրանց մասին, ովքեր սպանվում են Ալլահի ճանապարհին որպես հանգուցյալ: Ոչ նրանք կենդանի են, գտնելով պահպանություն իրենց Տիրոջից»: (3:169)

Փաստորեն, Ջիհադը վկայում է նրանց ճշմարտությունը, անկեղծությունն ու կատարյալ հնազանդություն, ովքեր մղում են այդ հանուն Ալլահի: Այն նույնպես, արմատախիլ է անում անարդարությունը և մարդկանց ազատություն է տալիս

խաղաղությամբ երկրպագել Իրական Աստծուն, առանց հետապնդման վախի: Ղուրանը ասում է.

«Եվ մարտնչիր նրանց դեմ մինչ այլևս գոյություն չունի հետապնդում և կրոնը ազատորեն քարոզվում է հանուն Ալլահի»: (2:193)

Ջիհադը լքելը որոշակիորեն առաջնորդում է ստորացման.

«Եթե դուք իրագործում եք Բայ'Ալ-Ինահ, (այսինքն, որոշակի գնով ապրանք եք վաճառում և այնուհետ ետ եք գնում նրանից ավելի քիչ գնով), հետևեք կովերի պոչին, (այսինքն, տարվեք

գյուղատնտեսությամբ և գոհացեք դրանով) և սին Ջիհադը Ալլահը կվշտացնի ձեզ ստորացմամբ և Նա չի թեթևացնի ձեզ դրանից, մինչ դուք չվերադառնաք ձեր կրոնին»: (Աբու Դաուդ)

Նույնպես, Ջիհադը վկայում է անհատի անկեղծությունը և ապահովությունը փարիսեցությունից, ինչը վկայում է հետևյալ Պատումը, որտեղ Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասում է.

«Նա, ով կնքում է մահկանացուն, մինչ երբեք չի մտածել Ալլահի ուղղու Ջիհադի մասին, կկնքի այն որպես փարիսեցի»: (Աբու Դաուդ)

Միգուցե պատեհ կլինի այստեղ նշել այն փաստը, որ Իսլամը չի տարածվել «սրի ուժով», ինչպես հայտարարում են որոշ արևելագետներ և Արևմտյան հեղինակներ: Փաստորեն, պարտադրանքը անհամատեղելի է Իսլամի հետ, որովհետև այն կախված է հավատքից և ինքնակառավարումից և ուստի, անիմաստ է դառնում, եթե դրդում են ստիպողաբար: Նույնպես, աջակցել սրան, նման է կարծես Ալլահը հաստատել է ընտրություն, ոչ թե ուժ, որպես ճշմարտության և կեղծիքի տարբերակման ուղղի:Մինչդեռ Ղուրանը ասում է.

«Թող չլինի պարտադրանք կրոնի մեջ, Ճշմարտությունը պարզ է կանգնած կեղծիքից»: (2:256)

## ԳԵՂԵՑԿՈՒԹՅՈՒՆԸ ՄՅՈՒՍՄՆԵՐԻ ԱԶՔԵՐՈՎ

Փաստորեն իսլամի գեղեցկությունը գրավել է միլիոնավոր մարդկանց սրտեր և բերել նրանց իր մոտ: Նրա սկզբունքները նրանք գտել են ուղղիղ և ամեն ինչ ներառող ուսմունքները կիրառելի և շահավետ ամբողջ մարդկության համար: Եկեք տեսնենք, թե ինչ են ասել ոմանք:

Գերմանացի հասարակական գիտնական և դիվանագետ

Ուիլֆրեդ Հոֆմանը, այժմ Մուրադ Հոֆմանը, ասաց.

« Որոշ ժամանակ, ձգտելով ավելի ու ավելի ճշգրտության և հակիրճության, ես փորձել եմ համակարգված ձևով թղթին հանձնել բոլոր փիլիսոփայական ճշմարտությունները, որոնք ըստ իս, կարելի է ապացուցել պատճառաբանված կասկածով: Տվայլ ընթացքում, ես բացահայտեցի, որ ագնոստիկային բնորոշ վերաբերմունքը խելամիտ չէ: Անհատը ուղղակի չի կարող փախչել հավատալու որոշումից: Մեր շուրջ ամենի գոյություն արարումը ակնհայտ է; Այն,որ

Իսլամը անկասկած իրեն գտել է «մեծ ներդաշնակության մեջ ընդհանուր իրականության հետ»: Ուստի, առանց շոկի, ես գիտակցեցի, որ քայլ առ քայլ, ի դեմս ինձ և համարյա անգիտակցաբար, զգացմունքով և մտքերով ես դարձա Մահմեդական:Մնում էր միայն վերջին քայլը. ձևակերպել իմ դավանափոխությունը:Ինչ վերաբերվում է այսօրվան, ես Մահմեդական եմ, Ես ժամանել եմ:"[5]

Խոսելով Ալ-Մադինաh, Ջեդդահի, 1989 թվականի հուլիսի 15 թողարկման մասին, ծանրաքաշերի խմբի բոքսի

նախկին չեմպիոն Քասիուս Քլեյը, այժմ Մուհամմեդ Ալի Քլեյը ասաց.

«Իմ կյանքի ընթացքում ես շատ գեղեցիկ պահեր եմ ունեցել: Սակայն այն զգացումը, որը ես ունեցել եմ կանգնելով Արաֆաթ Լեռանը Մահմեդական Ուխտի, Հաջի ընթացքում, ամենաեզակին էր: Ես այնտեղ զգացի բարձրյալ աննկարագրելի հոգևոր մթնոլորտ, երբ ավելի քան մեկ ու կես միլիոն ուխտագնացներ խնդրում էին Ալլահին ներել իրենց մեղքերը և շնորհել նրանց Իր ընտրյալ օրհնությունը: Ուրախալի փորձ էր տեսնել տարբեր գույնի, ռասսայի և

ազգության ներկայացուցիչների, թագավորների, կառավարության ղեկավարների և շատ աղքատ երկրների հասարակ մարդկանց, բոլորը փաթաթված երկու պարզ ճերմակ սավանով, ովքեր աղոթում են Ալլահին, առանց գոռոզության կամ գերադասության որևէ զգացումի: Այդ Իսլամի հավասարության գաղափարի գործնական դրսևորում էր»: [6]

Ավստիացի Լեոփոլդ Ուեյսը, այժմ Մուհամմեդ Ասադը ասաց.

«Այն պահից երբ ես դարձա Մահմեդական, ինձ կրկին և անընդհատ հարցնում են, «Ինչու՞

են դու ընդունել Իսլամ: Ի՞նչն է քեզ առանձնապես գրավել»: Եվ ես պետք է խոստովանեմ. Ես որևէ բավարար պատասխան չունեմ: Որևէ որոշակի ուսմունք ինձ չի գրավել: Գրավել է ամբողջ հոյակապ, բարոյական ուսմունքի հաջորդական կառուցվածքը և կյանքի գործնական ծրագիրը: Նույնիսկ այժմ, ես չեմ կարող ասել, թե որ բնագավառն է ինձ ավելի գրավեց: Ինձ համար Իսլամը նման է ճարտարապետական կատարյալ աշխատանքի: Նրա բոլոր մասերը ներդաշնակորեն մտածված են լրացնել և աջակցել միմյանց, ոչինչ ավելորդ և բացակա չէ, որի արդյունքն է կատարյալ

հավասարակշռությունը և ամուր բաղադրությունը: Միգուցե այն զգացումը, որ Իսլամի ուսմունքի և դրույթների մեջ ամենը «իր իսկ վայրում է», մեծ ազդեցություն է գործել ինձ վրա: Դրա հետ մեկտեղ, միգուցե գոյություն ունեն այլ ազդեցություններ, որոնք այժմ դժվար է վերլուծել: Վերջին հաշվով, դա սիրո խնդիր է և սերը ստեղծում է շատ բաներ մեր ցանկություններից և մեր միայնությունից, մեր բարձր նպատակներից և մեր թերություններից, մեր ուժից և մեր թուլությունից: Իմ դեպքում սա էր:Իսլամը ինձ մոտ եկավ որպես կողոպտիչ, ով տուն է մտել գիշերը, սակայն ի տարբերություն

կողոպտչի, այն ներս մտավ որպես բարիք»:[7]

Գերմանացի դիվանագետ և հասարակական գործիչ Մուհամմեդ Ա. Հոբհոմը ասաց.

«Ինչու՞ են Արևմուտքի մարդիկ ընդունում Իսլամ: Գոյություն ունեն բազմաթիվ պատճառներ: Առաջին հերթին ճշմարտությունը միշտ ունի իր հզորությունը: Իսլամի հիմնական դրույթները այնքան բանական, այնքան բնական և այնքան հրապուրիչ են, որ ազնիվ ճշմարտություն փնտրողը չի կարող չազդվել դրանցից: Վերցնենք, օրինակ միաստվածության հավատքը;

ինչպես է այն բարձրացնում մարդու արժանապատվությունը և ինչպես է այն ազատում մեզ անոտհապաշտության հրապուրանքից: Որքան բնական է այն առաջնորդում մարդուն հավասարության, քանի որ բոլորին արարել է նույն Աստվածը և բոլորը նույն Աստծո ծառաներ են: Մասնավորապես գերմանացիների համար, Աստծո հավատքը ներշնչանքի, անվախ քաջության և ապահովության զգացումի աղբյուր է: Այնուհետ, մահից հետո կյանքի գաղափարը շրջում է արժեքները: Կյանքը այս աշխարհում ոչ ավելին քան հիմնական առարկա է և մեր մարդկային էներգիայի մեծ մասը

նվիրված է մեր Հետագա Կյանքի բարօրությանը: Դատաստանի Օրվա Հավատքը մեխանիկորեն դրդում է մարդուն դադարել սխալ արարքները, քանի որ բարի արարքները մենակ կարող են հաստատել հավերժ փրկությունը, չնայած վատ արարքները կարող են բարգավաճել այստեղ սահմանափակ ժամանակաընթացք: Հավատքը, որ ոչ ոք չի կարող փախչել հետևանքներից դատաստանի Արդար, Անկողմնակալ և Ամենագետ Տիրոջից, ստիպում է կրկնակի մտածել սխալ գործելուց առաջ և անշուշտ այս ներքին ստուգումը ավելի արդյունավետ է, քան ամենաարդյունավետ

ռացիկանական ուժերը աշխարհում:

Մեկ այլ բան, որը գրավում է օտարերկրացիներին առ իսլամը դրա հանդուրժողականության շեշտադրությունն է: Այնուհետ ամենօրյա աղոթքները ուսուցանում են ճշգրտությունը և մեկ ամսյա պահքը հնարավորություն է տալիս վարժել ինքնակառավարումը և առանց կասկածի ճշգրտությունը և ինքնակառավարումը լավ և մեծ մարդու ամենակարևոր երկու ածականներն են:

Այժմ գալիս է Իսլամի իրական նվաճումը: Այն միակ

գաղափարախոսությունն է, որը հաջողության է հասել առանց պարտադրանքի իր հետևորդների մեջ արմատավորելով էթիկ և բարոյական սահմանների հոգևոր ուսումնասիրությունը: Մահմեդականը գիտի, որ որտեղ էլ որ նա գտնվի, Աստված նրանց դիտում է: Տվյալ հավատքը նրան հեռու է պահում մեղքից: Ինչպես մարդը բնականորեն հակված է բարիքի, նույնպես Իսլամը ներկայացնում է մտքի և սրտի խաղաղությունը, որը և ամբողջովին բացակայում է մերօրյա արևմտյան հասարակության մեջ:

Ես ապրել եմ կյանքի տարբեր համակարգերում և ունեմ տարբեր գաղափարախոսություններ ուսումնասիրելու փորձ, սակայն եկել եմ այն եզրակացության, որ ոչ մեկը այնքան կատարյալ չէ, որքան Իսլամը:

Կոմունիզմը ունի իր գրավչությունները, այսպիսով ունի աշխարհիկ ժողովրդավարություն և Նացիզմ: Սակայն ոչ մեկը չունի առաքինի կյանքի կատարյալ ծածկագիր: Միայն Իսլամը ունի այդ և պատճառ է հանդիսանում լավ մարդկանց ընդունել:

Իսլամը տեսական չէ, այն գործնական է: Իսլամը գերատեսչական խնդիր չէ; այն նշանակում է Աստծո կամքի կատարյալ հնազանդություն:"[8]

Դեվիս Ուարինգթոն Ֆրայը Ավստրալիայից ասաց.

« Իսլամը եկավ ինձ մոտ, ինչպես գարունն է գալիս սառը երկրի վրա խավար ձմեռանից հետո: Այն ջերմացրեց իմ հոգին և պարուրեց ինձ գեղեցիկ ուսմունքներով: Որքան տրամաբանական է: «Գոյություն ունի միայն մեկ Աստված և Մուհամմեդը նրա Մարգարեն է»: Արդյո՞ք գոյություն ունի սրանից ավելի

կսեմ բան :Առեղծվածային ոչ «Հայրը, Որդին և Սուրբ Հոգին» ծիսական չէ, որը ես ենթադրում եմ բավական ներշնչող է, սակայն եռանդուն մտքին դժվար բավարարող: Իսլամը այնքան ժամանակակից է, այնքան կիրառելի այսօր աշխարհին»:[9]

Թ. Հ. Մեբարկլիսը Իռլանդիայից գրում է.

«Ի տարբերություն Քրիստոնեական աղանդների նեղ տեսակետի, Իսլամի ընդլայն հայացքը, միջին դարերի Իսլամական երկրների ուսուցումը և մշակույթը, ի համեմատություն այդ ժամանակահատվածի այլ

երկրների տգիտության և անոտիապաշտությունների փոխհատուցում է Քրիստոնեական գաղափարի քավության մի քանի դրույթների, որոնք սկզբում գրավում են ինձ: Ավելի ուշ ես սկսեցի գիտակցել, որ այստեղ հավատքը մեծ է ինչպես մարդկությունը, որը նույնպես պատրաստ է ուղղորդել հարուստներին և աղքատներին և ի վիճակի է կտրել ծագման և գույնի բոլոր խոչընդոտները»:[10]

Ամերիկացի բանաստեղծ, քննադատ և հեղինակ Գնդապետ Դոնալդ Ս. Ռոքվելը գրում է.

«Իսլամի պարզությունը, հզոր կոչը և մզկիթների գերող միջավայրը, հավատարիմ հետևորդների անկեղծությունը, ամբողջ աշխարհից միլիոնների վստահություն ներշնչող գիտակցումը, ովքեր պատասխանում են հինգանգամյա օրական աղոթքների կոչին, այս բոլոր գործոնները սկզբում գրավեցին ինձ: Սակայն այն բանից հետո, երբ ես որոշեցի դառնալ Իսլամի հետևորդ, ես գտա շատ այլ ավելի խորը պատճառներ, հաստատելու իմ որոշումը: Մարգարեի կյանքով լի գործողությունների գաղափարների համակցված ընթացքը և դիտումը, իմաստուն

խորհուրդը, բարեգործության հորդորները և բարեգթությունը: Մարդասիրության ակնհայտությունը, կանանց իրավունքների առաջին հայտարարությունը Մեքքայի մարդու ուսմունքների այս և այլ գործոններ ինձ համար գործնական կրոնի առաջին ակնհայտ վկայություններից էին, որոնք այնքան արտահայտիչ և հակված նշված է Մուհամմեդի խոր իմաստ ունեցող խոսքերում, «Վստահիր Աստծուն և կապիր ուղտը»: Նա տվեց մեզ նորմալ արարքի կրոնական համակարգ, այլ ոչ թե անտես ուժերի պաշտպանության կույր հավատք, անկախ մեր իսկ արհամարհանքի,

սակայն վստահ, որ եթե մենք ամենը ճգրտորեն և մեր ուժերի ներածին չափով իրագործենք, մենք կարող ենք վստահել այն բանին, ինչը գալիս է որպես Աստծո Կամք… Երբ ես կանգնում եմ ոգեշնչող Ստամբուլի, Դամասկոսի, Երուսաղեմի, Կաhիրեյի, Ալժիրի, Տանջերի, Ֆեսի և այլ քաղաքների մզկիթներում, ես գիտակցում եմ Իսլամի պարզ կոչի զորավոր վերելքի hզոր hակազդեցությունը,ի hակազդեցություն վերամբարձ բաների զգացումի, որոնք ինքնուրույն են, մշակած զարդարանքից, զարդերից, պատկերներից, նկարներից,

երաժշտությունից և կրոնական ծեսերից: Մզկիթը Աստծո մեծ իրականության հանգիստ զննում և ինքնակառավարում է: Իսլամի ժողովրդավարությունը միշտ եղել է կոչ ինձ: Հնազանդ երկրպագությամբ մզկիթի գետնին, ծնկաչոք, տիրակալն ու աղքատը նույն իրավունքները ունեն: Գոյություն չունեն վարձված նստարաններ կամ հատուկ պատվիրված նստատեղեր:

Մահմեդականները չեն ընդունում որևէ միջնորդ իրենց և Աստծո միջև: Նա ուղղակի գնում է կյանքի արարման անտեսանելի աղբյուրին, Աստծուն, առանց

կիառելու մեղքերի քավության փրկիչ բանաձևը և ուսուցչի հզորության հավատքը, որը նրան փրկություն թույլ կտա:Իսլամի համընդհանուր եղբայրությունը, անկախ ռասսայի, քաղաքականության, գույնի կամ երկրի, իմ կյանքի ընթացքում շատ անգամներ ինձ եա է վերադարձրել տուն: Եվ, այս մեկ այլ գործոն հանդիսացավ, որը մղեց ինձ դեպի Հավատքը»: [11]

Անհիմն հայտարարությունը, որ Իսլամը դավանափոխ է անում մարդկանց «նվաճելով ուժի միջոցով» նույնպես հերքում են հայտնի ոչ-մահմեդականները: Մահաթմա Գանդին, օրինակ,

Երիտասարդ Հնդկաստան, 1924 թվականին ասում է.

«Ես ավելի քան համոզվեցի, որ այն սուրը չէ, որ հաղթել է Իսլամի տեղը այս օրերի կյանքի ուրվագծում: Այն խիստ պարզությունն է, Մարգարեյի բացարձակ ինքնակառավարումը, նրա բծախնդիր ուշադրությունը խնդիրների նկատմամբ, նրա անսահման նվիրվածությունը ընկերներին և հետևորդներին, նրա քաջությունը, նրա կատարյալ վստահություն Աստծուն և նրա իսկ առաքելությունը: Այս և ոչ թե սուրը կրեց ամենը,նրանցից առաջ և հաղթահարեց յուրաքանչյուր դժվարություն»:[12]

Ս. Թրիտոնը գրում է.

«Մահմեդական զինվորի պատկերը, ով առաջ է շարժվում սուրը մի ձեռքում և Ղուրանը մեկ, այլ միանգամայն սխալ է»:[13]

Ջեյմս Ա. Միքեները, Ընթերցողի Ժողովածու-ի մեջ, «Իսլամ- Սխալ ընկալված կրոնը» վերնագրով, գրում է.

«Ոչ մի այլ կրոն պատմության մեջ չի տարածվել այսքան արագ, որքան Իսլամը: Արևմուտքը լայնորեն հավատում է, որ կրոնի ալեկոծությունը հնարավոր է եղել սրով :Սակայն ոչ մի ժամանակակից գիտնական չի ընդունում այս գաղափարը և

Ղուրանը հանդիսանում է բանականության ազատության որոշակի աջակցություն»[14]

Լուրենս Ի. Բրունը Իսլամի Հեռանկարները աշխատության մեջ գրում է.

«Ի դեպ, այս լավ հաստատված փաստերը այնքան լայնորեն են տնօրինում գաղափարը, որը խրախուսում է Քրիստոնեական գրերը Մահմեդականների մասին, որ, որտեղ էլ որ նրանք գնան, մարդկանց ստիպում են ընդունել Իսլամ սրի տեսանկյունից»:[15]

Դե Լեյ Օ' Լինը նույնպես, Իսլամը Խաչմերուկներում, Լոնդոն 1923 էջ. 8 աշխատության մեջ գրում է.

«Ամեն դեպքում, պատմությունը պարզաբանում է, որ մոլի Մահմեդականների առասպելը, որը տարածվում է աշխարհով մեկ և ստիպում է Իսլամին ռասսաները գրավել սրով, ամենամոլի անհեթեթ առասպելներից մեկն է, որը եչբևէ կրկնել են պատմաբանները»:[16]

Այստեղ պատեհ է նշել, որ բացարձակ սխալ է դատել Իսլամը Մահմեդականների պայմանական այլասերվածությամբ և աչք ծակող կոռուպցիայով, որը տարածվում է Մահմեդական աշխարհում: Իսլամը քարոզում է մեկ բան և ինչ մերօրյա

Մահմեդականները իրագործում են ,մեկ այլ բան է: Միակ ուղին, արդար լինելու Իսլամի նկատմամբ նրա առաքինի ուսմունքներ գտնելն է, որոնք ակնհայտորեն սահմանված են Ղուրանի ծավալով և Մարգարեական սովորույթով: Հայտնի երգիչ Քեթ Սթիվենսը, ով ավելի ուշ ընդունեց Իսլամ, նկատեց.

«Միակ կլինի Իսլամը դատել որոշ վատ Մահմեդականների վարքի լույսի ներքո, ում միշտ ցուցադրում են տեղեկատվությամբ: Այդ նույնն է, եթե դատենք մեքենայի մասին, եթե վարորդը հարբած է և

հարվածում է պատին: Իսլամը բոլոր մարդկանց առաջնորդում է առօրյա կյանքի, հոգևոր, մտավոր և ֆիզիկական բնագավառներով; Այնուամենայնիվ, մենք պետք է գտնենք տվյալ հրահանգների աղբյուրները. Ղուրանը և Մարգարեի օրինակը: Այնուհետ, մենք կարող ենք տեսնել Իսլամի գաղափարը»:[17]

Ինչ ասում են տեղեկատվությունները և շատ ակադեմիական շրջանները սովորաբար Իսլամի մասին նույնպես սխալ գաղափար է տալիս դրա մասին: Ինչպես ասում է Մորիս Բուքեյլը.

« Արևմուտքի Իսլամի մասին լիովին սխալ հայտարարությունները, երբեմն տգիտության արդյունք է, երբեմն էլ կանոնավոր նվազում: Ասված ամենայուրջ ստերը կապված են այն փաստերի հետ, որ սխալ կարծիքները ներելի են, իսկ ընթացիկ փաստերի ներկայացումը հակառակ է իրականությանը: Այն խանգարում է ընթերցել հարգալից աշխատությունների աչք զարնող սխալները, որոնք գրել հեղինակները, ովքեր նախապես բարձր որակավորված են:"[18]

## ԲԱՐԻՔԸ և ՉԱՐԻՔԸ

Իսլամում հրամանները և արգելքները Ալլահից է, որը ծառայում է ամբողջ մարդկության հոգևոր և մտավոր բարեկեցությանը, ինչպես նաև բարոյական և նյութական շահերին: Երբ բարոյական սկզբունքները ,որը որոշում է Իսլամը որպես թույլատրելի կամ անթույլատրելի, ձևավորված են մարդ արարածի մեջ կառուցել ինչեղ միտք, խաղաղ հոգի, ամուր անհատականություն և առողջ մարմին: Կասկած չկա, որ տվյալ անհրաժեշտ պահանջները ընդհանուր բարեկեցության և մարդկության բարգավաճման համար են: Ալլահը Արարիչն է և տեղյակ է, թե ինչն է լավագույնը

իր արարածների համար:
Խոսելով անգրագետ Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն)բնութագրի մասին, ում մասին իրենց Գրերի, Թորայի և Աստվածաշնչի մեջ գտնում են հրեաները և քրիստոնյաները, Ղուրանը ասում է.

« Նա, այսինքն, (Մարգարե Մուհամմեդը) պատվիրում է նրանց, ինչը արդար է և արգելում է նրանց այն, ինչը չարիք է: Նա թույլատրում է նրանց որպես օրինական այն, ինչ բարիք է և արգելում է նրանց այն, ինչ չարիք և պիղծ է»: (7:157)

Այս Տարբերակը պարզ է դարձնում, որ Իսլամում այն, ինչ

առաջնորդում է անհատի կամ հասարակության բարեկեցությանը բարոյապես բարիք է և ուստի օրինական և ինչ վնասակար է, և անհատին և հասարակությանը բարոյապես չարիք է և ուստի անօրինական: Իսլամի գեղեցկության օրինակները անթիվ են և ուստի մոտ են անհնարությանը լինելով սպառիչ և մեջբերելով բոլորը: Ամեն դեպքում, մենք կփորձենք Իսլամական տեսակետով ամրացնել որոշ հրամաններ և թույլտվություններ, ներկայացնելով ընթերցողին այս գեղեցկության փոքրիկ գաղափարը: Մենք հիմք կվերցնենք Ղուրանը և

Մարգարեական Սովորույթը, քանի որ հետևյալները Իսլամի հիմնական աղբյուրներ են, որոնք հայտնի են ինչպես Շարիաթ, Իսլամական Օրենսդրություն:

## ԲԱՐԻՔԻ ՀՐԱՄԱՆՆԵՐ

### ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԾՆՆԴՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Իսլամը մարդուն տվել է հավասարաություն որպես ծննդյան իրավունք և ուստի կոտրել է գույնի, ռասսայի, լեզվի, ազգության և հասարակական աստիճանի բոլոր արհեստական սահմանները:

« Ով Մարդկություն, Մենք արարել ենք ձեզ մեկ զույգից արական և իգական և դարձրել ենք ձեզ ազգեր և ցեղեր, որպեսզի դուք ի վիճակի լինեք ճանաչել միմյանց: Իրոք, ձեզանից ամենաապատվելին Ալլահի հանդեպ նա, է ով ամենաառաքինին է ձեզանից»: ( 49:13)

Փաստացի, այս Տարբերակը ուղղված է ոչ միայն Մահմեդական եղբայրությանը, այլ ամբողջ մարդկային ռասսային, չնայած պարզ է, որ կատարյալ աշխարհում նման պետք է լինեն երկուսը: ինչպես մարդկությունը մեկ զույգ

ծնողների ժառանգն է, որոնց անուններն են Ադամ և Եվա: Նրանց ցեղերը, ռասսաները և ազգերը պատշաճ պիտակներ են, ըստ որի մենք կարող ենք գիտակցել որոշակի տարբերակիչ բնութագրեր: Տվյալ տարբերությունները չեն ազդում Ալլահի հանդեպ մարդու բարձրությանը: Ընտրյալ և հեթանոս մարդկանց, հասարակական կաստաների և երկրորդ աստիճանի քաղաքացիների մոլոր գաղափարը թերաճ են և տեղ չունեն Իսլամում:Ալլահի անունով, պատիվը պատկանում է բարեպաշտներին և ճշմարտացիներին:

Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

«Ով մարդկություն, ձեր Տերը Մեկն է և ձեր հայրը մեկը; Դուք բոլորդ Ադամի ժառանգներն եք և Ադամին արարել են երկրից: Ձեզանից ամենաապատվելին Ալլահի առջև նա է, ով ամենաճշմարիտն է: Ոչ մի արաբ չունի առավելություն ոչ արաբի նկատմամբ, ոչ էլ գունավոր անձը ունի որևէ առավելություն սպիտակ անձի նկատմամբ, կամ սպիտակ անձը որևէ առավելություն գունավոր անձի նկատմամբ, բացառությամբ բարեպաշտությամբ»: (Ահմեդ և Աթ-Թիրմիզի)

# ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԲՈԼՈՐ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐՈՒՄ

Իսլամը հրամայում է արդարություն և բոլոր հանգամանքներում արգելում է անարդարամտությունը: Ղուրանը ասում է.

« Ով, դուք, ովքեր հավատում եք: Եղեք խիստ, հետևելիս արդարությանը և վկա եղեք հանուն Ալլահի, նույնիսկ եթե դա դեմ լինի ձեզ կամ ծնողներին և ազգականներին»: (4:135)

«Ով դուք, ովքեր հավատացել եք: Եղեք հաստատուն Հանուն Ալլահի, վկա եղեք անաչառությամբ և թող

մարդկանց թշնամությունը չդրդի ձեզ գործել այլ կերպ, քան արդարությամբ: Եղեք միշտ արդար, այն ավելի մոտ է առաքինությանը»: (5:8)

Իսլամական արդարությունը ավելի բարձր մի բան է, քան գերիշխող մյուս հասարակությունները; Այն փնտրում է խորը շարժառիթներ, որովհետև մենք պետք է գործենք կարծես Ալլահի ներկայությամբ ենք, Ով Քաջատեղյակ է բոլոր շարժառիթներին:Իսլամը Մահմեդականներին հրահանգում է աջակցել արդարությանը, կյանքի բոլոր բնագավառներում, առանց որևէ վախի, նույնիսկ, եթե

այն վնաս է իրենց իսկ հետաքրքրություններին կամ նրանց հետաքրքրություններին, ովքեր մոտ և սիրելի են նրանց:

«Ով դուք ,ովքեր հավատացել եք: Հաստատուն կանգնեք արդարության համար, որպես Ալլահի վկաներ, նույնիսկ, եթե այն դեմ է ձեզ, կամ ձեր ծնողներին կամ ձեր ազգականներին, լինի նա հարուստ թե աղքատ, քանի որ Ալլահը ավելի լավ Պաշտպան է երկուսին էլ, քան դուք: Այսպիսով, մի հետևեք ձեր սրտերի կրքերին, որպեսզի չլինի թե դուք խուսափում եք արդարությունից»: (4:135)

Արդարությունը պետք է կառավարել, նույնիսկ, եթե այն դեմ է կանոններին, քանի որ նրանք օրենքից վեր չեն: Մի կնոջ, ով պատկանում էր պատվելի ընտանիքի, ձերբակալեցին գողության կապի համար: Դեպքը հասավ Մարգարեյին (Խ.Ա.Ո.Ն) և առաջարկեցին խնայել պատժից: Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն ) պատասխանեց.

« Ձեր նախորդող ազգերին, ովքեր ապրել են ձեզանից առաջ, Ալլահը կործանել է, որովհետև նրանք պատժում էին հասարակ մարդուն իրենց հանցագործությունների համար և թողնում էին իրենց պատվելիներին մնալ առանց

պատժի իրենց հանցագործությունների համար: Ես երդվում եմ Նրանով, Ում Ձեռքերում է իմ հոգին, որ նույնիսկ, եթե Ֆաթիման, Մուհամմեդի դուստրը գործի այս հանցանքը ես կանդամահատեի նրա ձեռքը»:

Ումարի (Խ.Ա.Ո.Ն) խալիֆայության ընթացքում, Մուհամմեդը, Ամր իբն Ալ-Ասի որդին, Եգիպտոսի կառավարիչը, հարվածեց եգիպտացուն: Եգիպտացին գնաց Ալ-Մադինաh և ուղղեց իր բողոքը խալիֆին, ով անմիջապես կանչեց կառավարչին և նրա որդուն: Երբ նրանք հայտնվեցին նրա առջև,

խալիֆը տվեց խարազան Եգիպտացի հայցվորին և խնդրեց նրան հարվածել կառավարչի որդուն իր ներկայությամբ: Այն բանից հետո, երբ Եգիպտացին վրեժխնդիր եղավ, Ումարը ասաց նրան. «Թող որևէ մեկը խարազանի պատվելի կառավարչին նույնպես: Նրա որդին, անուշտ չէր հարվածի քեզ, եթե չլիներ կեղծ հպարտությունը, որ նա ուներ իր հոր բարձր դիրքի շնորհիվ»: Հայցվորը ներկայացրեց, «Անձը, ով հարվածել է ինձ, ես արդեն վրեժխնդիր եմ եղել»: Ումարը ասաց. «Հանուն Ալլահի, եթե դու ծեծի ենթարկեիր նրան, կառավարչին, ես չէի ստուգի քեզ

այդ անելուց: Դու խոցել ես նրան քո կամքով»: Այնուհետ 'Ումարը շրջվեց դեպի Ամր իբն Ալ Ասին և ասաց բարկացած. «Օվ, Ամր, ե՞րբ ես դու սկսել ստրկացնել մարդկանց, չնայած նրանք ծնվել են ազատ իրենց մայրերից»:

Իսլամը արգելում է անարդարությունը իր բոլոր դրսևորումներով: Այն պարզ է դարձնում, որ բոլոր նրանք, ովքեր սխալվում են մյուս մարդկանց հետ և բռնանում են իրենց իրավունքներին կկորցնեն իրենց պարգևները Դատաստանի օրը նրանց նկատմամբ, ում հանդեպ սխալ են եղել: Քանի ո Ալլահը, Արդարը ոչ ոքի հանդեպ չի

սխալվում և Դատաստանի Օրը լիովին հաստատում է արդարությունը: Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) մեկ անգամ հարցրեց իր Ուղեկցորդներին. «Արդյո՞ք դուք գիտեք, թե ով է իրոք, սնանկ»: Նրանք պատասխանեցին. «Սնանկը մեր մեջ մեկն է, ով չունի ապրանք կամ կայք»: Սրան նա ասաց.

«Իրոք, սնանկը իմ հետևորդներից մեկն է, ով կգա Դատաստանի Օրը Սալաթի, (աղոթքի) արձանագրությամբ, պահքի և Զաքյաթի, (ունեցվածքի պարտադիր վճարմամբ): Այն պատճառով, որ ոտնահարել են այսպես և այնպես, զրպարտել են

այսպես և այնպես, կողոպտել են այսինչի և այնինիչի ունեցվածքը, սպանել են այսինչին կամ այնինչին և անօրինական հարվածել է այսպես և այնպես, նա կտա իր պարգևները բոլոր այդ մարդկանց ում, հանդեպ սխալ են գործել, եթե ամեն դեպքում, նրա պարգևները բավարար չեն, դրա փոխարեն նա կվերցնի նրանց մեղքերը, այնուհետ նրան կգցեն Կրակ»: ( Մուսլիմ )

## ՊԱՀՊԱՆԵԼՈՎ ՊԱՏԻՎԸ

Իսլամը պատվիրում է իր հետևորդներին լինել ինքնուրույն և հեռու մնալ որևէ մեկի հանդեպ

պատասխանատվությունից: Իսլամը հարգանք է տածում ամեն տեսակի աշխատանքի նկատմամբ, ապրուստ վաստակելու համար, այնքան ժամանակ, որքան գոյություն չունի անպարկեշտություն կամ ներառող սխալ:Այն իր հետևորդներին պարտադրում է պարբերաբար զբաղվել արդյունավետ աշխատանքով և խուսափել ծուլությունից և մուրացիկությունից: Ըստ Իսլամի, ազնիվ աշխատող մարդը չի իջնի ի հաշիվ աշխատանքի, որ նա կատարում է ապրուստի համար:Փաստորեն, նրա նպատակն է պահպանել անհատի պատիվը և

ինքնազնահատականը:
Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

«Ավելի լավ է ձեզ համար վերցնել պարաններ, գնալ լեռը, վառելափայտ կտրել, կրել այն մեջքին, վաճառել և այսպիսով, պահպանել ձեր դեմքը ստորացումից, քան մուրալ մարդկանցից, անկախ նրանք տալիս են ձեզ, թե ոչ»: (Ալ-Բուխարի)

« Երբեք ոչ ոք չի համտեսել ավելի լավ սնունդ, քան որը նա համտեսել է որպես արդյունք իր ձեռքի»: (Ալ- Բուխարի)

Նույնպես Իսլամը Մահմեդականներին հրավիրում է

պահպանել արդյունավետությունը, որևէ աշխատանք ձեռնարկելիս: Այն ուսուցանում է նրանց, որ, եթե որևէ բան արժան է կատարելու, այն արժանի է կատարել լավ:Այն հայտնում է, որ եթե մեզանից որևէ մեկը որևէ գործ է ձեռնարկում, Աստված սիրում է տեսնել մեզ այն լավ անելուց և արդյունավետությամբ:

## ԽՆԴԻՐՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ՓՈԽԱԴԱՐՁ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅԱՄԲ

Իսլամը կոչ է անում իր հետևորդներին կառավարել իրենց խնդիրները փոխադարձ

խորհրդատվությամբ և ողջունել այլ մարդկանց կարծիքները այնքան ժամանակ, որքան այն համապատասխանում է ճշգրիտ պատճառաբանությանը և առաջ է գալիս խորիմաստ փորձից:
Ղուրանը ասում է.

« Նրանք, այսինքն բարեպաշտները, ովքեր պատասխանում են իրենց Տիրոջը, հաստատում են կանոնավոր Սալաթ, և ում խնդիրները որոշվում են փոխադարձ խորհրդատվությամբ»: (42:38)

«Թողություն խնդրեք նրանց համար և խորհուրդ տվեք նրանց խնդիրներում»: (3:159)

## ԱՄԵՆ ԳՆՈՎ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ

Նույնպես, Իսլամը կոչ է անում իր հետևորդներին ճանաչել և հասկանալ տիեզերքի Արարչին և հետագայում իրենց կյանքը վճռականորեն և հաստատակամորեն ձևավորել ըստ այդ Ճշմարտության և Իրականության: Գիտակցության այդ աստիճան հասնելուց հետո, այն ուսուցանում է նրանց, մնալ հաստատուն և երբեք չգայթակղվել տարբեր ոլոր

hոսանքներով, գաղափարախոսություններով և փիլիսոփայություններով, որոնք կարող են փոխել իրենց ուղին: Հաստատակամության վեհ սկզբունքների արդյունք են տալիս և նրանք, ովքեր հետևում են դրան, անշուշտ կստանան Ալլահի պարգևը այս և Հետագա կյանքում: Ղուրանը ասում է.

««Նրանց դեպքում, ովքեր ասում են.'Մեր Տերը Ալլահն է» և այնուհետ, կանգնում են ուղիղ և ամուր, հրեշտակները իջնում են նրանց մոտ, մահվան մահճում ասելով. «Մի վախեցեք, ոչ էլ վշտացեք: Սակայն ստացեք ավետիս Հաճույքի Արգու, որը ձեզ

խոստացել են: Մենք ձեր ընկերներներն ենք և պաշտպանները այս կյանքում և հետագա; այնտեղ դուք կունենաք ամենը, ինչ ցանկանում եք; այնտես ամենը, ինչ դուք խնդրել եք »»: ( 41:30-31)

Նույնպես Ալլահը դիմում է Իր Մարագրեյին (Խ.Ա.Ո.Ն) այսպես.

«Ուստի կանգնեք հաստատուն, ճիշտ ուղղուն, ինչպես ձեզ պատվիրել են և նույնպես նրանք, ովքեր շրջվել են դեպի Ալլահը ձեզ հետ»: (11:112)

Մարգարեյի անկեղծ խորհուրդը իր ուղեկցորդ Սուֆյանին, Աբդուլլահի որդուն, նույնպես

պարզ է դարձնում տվյալ գաղափարը.

««Ասա, «Ես հավատում եմ Ալլահին», այնուհետ մնաց հաստատուն»»:

Ղուրանը ասում է.

« Օվ դուք, ովքեր հավատում եք: Վախեցեք Ալլահից և եղեք նրանց հետ, ովքեր ճշմարիտ են»: (9:119)

« Դադարեք այն, ինչ թվում է ձեզ կասկածելի և հավատահիմ մնալ այնին, ինչ կասկածելի չէ»: (Աթ-Թիրմիզի)

ԲԱՐՈՒԹՅՈՒՆ ԲՈԼՈՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Մահմեդականը իր ընկերների փոխհարաբերությունների ընթացքում ունի որոշակի պարտականություններ: Նա պետք է բարություն ցուցաբերի իր բարեկամների նկատմամբ, հոգ տանի իր հարևանին, ցուցաբերի կապվածություն և աջակցություն աղքատներին և որբերին, գթասրտություն ծառաներին և հիվանդներին, կարեկցություն երիտասարդներին, հարգանք ծերերին, ցավակցություն ողբացողներին և ուրախություն ճնշվածներին: Ղուրանը ասում է.

«Երկրպագեք Ալլահին և մի միացրեք ոչ ոքի Նրան, երկրպագության մեջ և

ցուցաբերեք բարություն ծնողներին, ազգականներին, որբերին, աղքատներին, հարևանին, ով մոտ է ազգակցական կապերով, հարևանին, ով օտար է, ուղեկցորդին ձեր կողմից, ճանապարհորդին և այն ստրուկներին, ովքեր գտնվում են ձեր աջ ձեռքում»: (4:36)

« Եվ իջեցրեք ձեր թևը գթասրտության հավատացյալներին, ովքեր հետևում են ձեզ»: (26:215)

« Մի վերաբերեք որբին ճնշմամբ, մի վանեք նրանց, ովքեր խնդրում

են որևէ բան և հայտարարում են ձեր Տիրոջ շնորհը»: (93:9-11)

« Արդյո՞ք դուք տեսել եք նրան, ով ժխտում է գալիք Դատաստանը: Ապա, այսպիսին է մեկը, ով վանում է որբին և չի խրախուսում աղքատին կերակրելը»: (107:1-3)

« Եվ ինչը ձեզ կստիպի ճանաչել ուղղին, որը ուղիղ է: Այն ստրուկի ազատումն է, կամ սովի ժամանակ որբին կամ ազգականին սնելը, կամ աղքատին օգնելը»: (90:12-16)

« Նա, այսինքն Մարգարեն Խ.Ա.Ո.Ն խոժոռվեց և շրջվեց, որովհետև նրա մոտ եկավ մի կույր մարդ: Սակայն, ինչ կարող է

ասել ձեզ այդ, բացառությամբ հնարավորության, որ նա ցանկություն ուներ փնտրել մաքրել իրեն, կամ նա կարող էր ստանալ հորդորանք և արդյո՞ք հիշեցումը կարող էր օգտակար լինել նրան»: (80:1-4)

Միջադեպը, որի մասին խոսում են վերջին Տարբերակները, վերաբերում է Մարգարե Մուհամմեդին (Խ.Ա.Ո.Ն) և կույր մարդուն, որի անունն էր Աբդուլլահ իբն Ումմ Մաքթում: Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) խորապես և անկեղծորեն զբաղված էր փորձելով հրավիրել հեթանոս Քուրեյշ առաջնորդներին առ Իսլամ, երբ նրան ընդհատեց կույր

մարդը, ով եկել էր ուսուցանել Ղուրան և փնտրել բավարարվածություն իր հոգևոր փափագին: Բնականաբար, Մարգարեին (Խ.Ա.Ո.Ն) դուր չեկավ, որ իրեն ընդհատում են և այսպիսով, նա խաժոժվեց և շրջվեց նրանից, որովհետև նա փորձում էր այդ առաջնորդների սրտերը շրջել դեպի Ճշմարտությունը և ուստի աջակցել Իսլամին: Ավելի ուշ Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ավարտեց զրուցել Քուրեյշ առաջնորդների հետ և համարյա հասել էր տուն, երբ ստացավ Հայտնություն, որը նա հրապարակեց առանց որևէ ինչ տատանման:Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) այնուհետ, միշտ

պահում էր մարդուն բարձր պատվով և հարգանքով:

Միջադեպը արտացոլեց Հայտնության նկատմամբ Մարգարեյի անկեղծության բարձրագույն պատիվը, որը արժանի էր նրան:Սուրան, որը ներառում է այս Տարբերակը, ապահովում է ինքնուրույն ապացույց, որ Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) Ղուրանի հեղինակը չէր, ոչ էլ Իսլամի հիմնադիրը, ինչպես սխալմամբ հայտարարում են որոշ Արևմուտքիցիներ և արևելագետներ: Եթե այդպես լիներ, նա չէր նշի տվյալ դրվագը, որի արդյունքում նաԱլլահից մեղմ կշտամբանք ստացավ.

Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) նույնպես ասաց.

« Նա, ով հավատում է Ալլահին և Վերջին Օրվան, չպետք է վնասի իր հարևանին; նա, ով հավատում է Ալլահին և վերջին օրվան, պետք է պատվի իր հյուրին; նա, ով հավատում է Ալլահին և վերջին օրվան պետք է բարի խոսի կամ լռություն պահպանի»: ( Ալ-Բուխարի և Մուսլիմ )

« Ալլահով, Նա չի լինի իրական հավատացյալ:" Նա սա կրկնեց երեք անգամ: Նրա ուղեկցորդները հարցրեցին նրան. «Ո՞վ է նա, օվ Ալլահի Մարգարե»: Նա պատասխանեց.«Անձը, ում

հարևանը ապահով չէ նրա վնասակար վարքից»: (Ալ-Բուխարի և Մուսլիմ)

« Նա իրական հավատացյալ չէ, ով կշտանում է, երբ իր հարևանը անոթի է»: (Միշկաթ Ալ-Մասաբիհ)

« Հանուն Ալլահի, լավագույն ընկերները նրանք են, ովքեր լավագույնն են միմյանց նկատմամբ և լավագույն հարևանները նրանք են, ովքեր լավագույնն են միմյանց նկատմամբ»: (Աթ-Թիրմիզի)

« Հրեշտակ Գաբրիելը շարունակում էր հորդորել ինձ լավ վերաբերմունք հարևանի

նկատմամբ այն աստիճան, որ ես կարծեցի, նա կբարգևի նրան ժառանգության իրավունք»: (Ալ-Բուխարի)

## ԼԻՆԵԼ ՊԱՐՏԱԿԱՆ ԾՆՈՂՆԵՐԻՆ

Իսլամը հրահանգում է բարություն և առաքինություն ծնողների նկատմամբ և այս առաքինի գիծը հավասար է համարում Աստծո երկրպագությանը: Ղուրանը ասում է.

« Եվ Մենք պատվիրում ենք մարդուն լինել բարի և պարտական իր ծնողներին» : (29:8)

««Եվ ձեր Տերը որոշել է, որ դուք չերկրպագեք ոչ որքի բացառությամբ Նրա և որ դուք լինեք պարտական ձեր ծնողներին: եթե նրանցից մեկը, կամ նրանցից երկուսը հասնում են ծերության ձեր կյանքի ընթացքում, մի ասեք նրանց անհարգալից խոսք, ոչ էլ բղավեք նրանց վրա, սակայն դիմեք նրանց պատվով: Եվ իջեցրեք նրանց առջև հնազանդության թևը և համեստություն գթասրտությամբ և ասեք. «Իմ Տերը, Շնորհել է նրանց Ձեր Գթասրտությունը քանի որ նրանք ինձ մեծացրել են, երբ ես երիտասարդ էի»»: ( 17:23,24)

« Եվ Մենք պատվիրել ենք մարդուն լինել պարտական և բարի իր ծնողներին: Երկունքից երկունք իր մայրը կրել է նրան և երկու տարի էր նրա կրծքով կերակրելը; լսեք հրամանը. «Ցույց տուր երախտագիտություն Ինձ և ձեր ծնողներին, Իմն է ձեր վերջին նպատակը»»: (31:14)

Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

«Դրախտը մայրերի ոտքերի տակ է»: (Ան- Նիսայի)

Մեկ անգամ մի մարդ եկավ Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն) մոտ և փնտրեց նրա թույլտվությունը մասնակցել Ջիհադի, (պայքար և մարտ Ալլահի ուղղում):

Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) հարցրեց նրան,«Արդյո՞ք քո ծնողները դեռ կենդանի են»: Մարդը դրականորեն պատասխանեց: Այնուհետ, Մարգարեն (Խ.Ա.Ո. Ն) ասաց. «Դու պետք է համարես նրանց ծառայելը որպես Ջիհադ»: (Ալ-Բուխարի և Մուսլիմ)

ՏԱՐԵՑՆԵՐԻՆ ՀԱՐԳԵԼԸ և ԿԱՐԵԿՑԵԼ ԿԱՆԱՆՑ ՈՒ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻՆ

Իսլամը պատվիրում է Մահմեդականներին հարգել տարեցներին և ցուցաբերել կարեկցանք և գթասրտություն երեխաներին: Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասում է.

« Գոյություն չունի մեր մեջ որևէ մեկը, ով չի ցուցաբերում գթասրտություն երիտասարդներին և հարգում և պատվում տարեցներին»: (Աթ-Թիրմիզի)

Մեկ անգամ Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) համբուրեց իր թոռ Ալ-Հասանին Ալ- Աքրա իբն Աաբիսի ներկայությամբ: Երբ վերջինս տեսավ այս նա նշեց. ««Ես ունեմ տաս զավակ և ես երբեք չեմ համբուրել նրանցից որևէ մեկին»: Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) նայեց նրան և ասաց. «Նա, ով չի ցուցաբերում գթասրտություն մյուսների նկատմամբ, Ալլահը չի ցուցաբերի գթասրտություն նրան

նկատմամբ»»: (Ալ-Բուխարի և Մուսլիմ)

Հավաքական աղոթքի առաջնորդը պատվիրել էր աղոթքը մի փոքր կարճեցնել, հաշվի առնելով նրանց, ովքեր նրա ետևում էին: Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

« Եթե ձեզանից որևէ մեկը առաջնորդում է աղոթք, դուք պետք է մի փոքր կարճեցնեք այդ, քանի որ հավաքը ներառում է տկարների, հիվանդների և տարեցների: Եթե, ամեն դեպքում, դուք միայնակ եք աղոթք անում, ապա դուք կարող եք երկարեցնել

այդ այնքան, որքան ցանկանում եք»: (Ալ-Բուխարի և Մուսլիմ)

Նույնիսկ պատերազմի ընթացքում, Իսլամը պատվիրում է մարտիկների ժամանակ բարություն ցուցաբերել կանանց, երեխաների, ծերերի և տկարների նկատմամբ: Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) սովորություն ուներ հրահանգել Մահմեդական զինվորներին, երբ նրանք գնում էին մարտի.

« Մի սպանեք որևէ տարեցի, երեխայի կամ որևէ կնոջ»: (Աբու Դաուդ )

« Մի սպանեք վանականների մենաստաններում»: (Իբն Հանբալ)

« Մի սպանեք մարդկանց, ովքեր նստած են երկրպագության վայրերում»: (Մուսնադ Իբն Հանբալ)

«Մի սպանեք վիրավորի, ոչ էլ հետապնդեք հեռացողին, ոչ էլ սպանեք գերուն»:

ՕԳՆԵԼ ԿԱՐԻՔԱՎՈՐՆԵՐԻՆ

Իսլամը կոչ է անում Մահմեդականներին օգնության ձեռք մեկնել կարիքավորին և չարչարվածին երջանկացնել: Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

« Մահմեդականը Մահմեդականի եղբայրն է: Նա ոչ ճնշում է նրան, ոչ էլ ձախողում նրան: Նա, ով ազատում է Մահմեդականին չարչարանքից, Ալլահը կազատի նրան չարչարանքներից մեկից Դատաստանի Օրը: Նա, ով քողարկում է Մահմեդականի մեղքերը, Ալլահը կքողարկի նրա իսկ մեղքերը Դատաստանի Օրը»: (Մուսլիմ)

« Եթե պարտատերը դժվարության մեջ է, շնորհեք նրան ժամանակ, մինչ հեշտ կլինի նրա համար վճարել: Սակայն, եթե դուք ազատեք այդ որպես բարեգործություն, դա ավելի լավ է

ձեզ համար, եթե դուք միայն իմանայիք»: (2:280)

Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

«Կար մի վաճառական, ով սովորություն ուներ կանխավճար տալ մարդկանց: Եթե նա տեղեկանում էր, որ իր պարտատերերի մեջ գոյություն ուներ հաճախորդ, ով դժվարության մեջ էր, նա կասեր իր ծառաներին.'Մի վերցրեք նրանից որևէ բան, ներեք նրան, այնպես որ Ալլահը կարողանա ներել մեզ:' Եվ, այսպիսով Ալլահը ներեց նրա մեղքերը»: (Ալ-Բուխարի)

# ԳԹԱՍՐՏՈՒԹՅՈՒՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Իսլամը իր հետևորդներին պատվիրում է գթասրտություն ցուցաբերել ոչ միայն մարդ արարածների, այլև կենդանիների նկատմամբ: Անհատը, ով վատ է վերաբերվում կենդանիներին, Իսլամում համարվում է մեղսագործ և ուստի հրավիրում է Ալլահի բարկությունը: Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

« Մի կին պատժվել է Դժոխքով, ի շնորհիվ կատվի, որին նա փակել է մինչ մահ:. Նա ոչ սնել էր, ոչ էլ ջուր էր տվել նրան, երբ փակել էր, ոչ էլ նա ազատ էր արձակել,

այնպես, որ այն ի վիճակի լիներ սնվել երկրի վնասատուներից»: (Ալ-Բուխարի և Մուսլիմ)

« Մի մարդ մոտեցավ ջրհորին, իջավ այնտեղ և ըմպեց : Ջրհորից դուրս կար մի շուն, որը փնչացնում էր ծայրահեղ ծարավից: Մարդը խղճաց նրան: Այսպիսով, նա հանեց իր կոշիկը, ջրով լցրեց այն և տվեց շանը, հագեցնելու ծարավը: Ալլահը գոհ մնաց մարդու բարի արարքով և ընդունեց նրան Դրախտ»: (Ալ-Բուխարի և Մուսլիմ)

Պատահեց այնպես, որ Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն) մոտով անցավ դրոշմած մի ավանակ:

Տեսնելով դրոշմը, նա (Խ.Ա.Ո.Ն) ասաց.«Թող Ալլահը անիծի նրան, ով դրոշմել է այն»: (Մուսլիմ)

Մեկ այլ պատում հայտնում է.

« Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) արգելեց մեզ հարվածել և դրոշմել կենդանիների դեմքին»: (Մուսլիմ)

Նույնպես, Իսլամը պարզ հրահանգներ է տալիս, կենդանուն սննդի համար մորթելու մասին: Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

« Ալլահը գերազանցություն և կատարելություն է նշանակում ամեն ինչում: Այսպիսով, եթե դուք մտադրված եք մորթել կենդանուն, արեք այդ լավագույն ձևով; և եթե

դուք մտադրվել եք մորթել կենդանուն, ապա արեք այդ լավագույն հնարավոր ձևով: Թող ձեզանից բոլորը համապատասխանորեն սրեն դանակը և թեթևացնեն կենդանուն»: (Մուսլիմ)

## ՄԻՄՅԱՆՑ ՀԶՈՐԱՑՆԵԼԸ

Իսլամը կոչ է անում միասնության և ներդաշնակության և հորդորում է ընդդեմ տարաձայնությունների և ատելության: Ղուրանը ասում է.

«Եվ ամուր պահեք բոլորը միասին Ալլահի պարանը, այսինքն Ղուրանը և մի բաժանվեք»: ( 3:103)

Այն նույնպես, օգնում է իր հետևորդներին միմյանց փոխանակել սեր, կարեկցնաք, ազնվություն և համագործակցություն: Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

« Երկու հավատացյալների միջև եղբայրության կապերը նման են շենքի աղյուսների, որոնցից յուրաքանչյուրը աջակցում և ամրացնում է մյուսին»: (Ալ-Բուխարի)

« Հավատացյալները իրենց փոխադարձ բարությամբ, կարեկցությամբ և համակրությամբ նման են մեկ մարմնի: Եթե վերջույթներից մեկը

չարչարված է, ամբողջ մարմինը պատասխանում է թուլությամբ և ջերմությամբ»: (Ալ-Բուխարի և Մուսլիմ)

## ՆԵՐԵԼ ՄՅՈՒՍՆԵՐԻ ՓՈՔՐԻԿ ՀԱՆՑԱՆՔՆԵՐԸ

Իսլամը իր հետևորդներին հրավիրում է ներողամիտ լինել այլ մարդկանց փոքր հանցանքները.

« Թող նրանք ներեն և ներողամիտ լինեն փոքր հանցանքներին: Արդյո՞ք դուք չեն ցանկանում, որ Ալլահը ների ձեզ»: (24:22)

« Ժխտեք չարիքը այն բանով, ինչը լավագույնն է»: (23:96)

## ՀԱՐԳԵԼ ՈՒԽՏԵՐԸ

Նույնպես, Իսլամը իր հետևորդներին պատվիրում է պատվել իրենց ուխտերը և լրացնել բոլոր իրենց պարտականությունները.

« Օվ դուք, ովքեր հավատացել են: Լրացրեք բոլոր պարտականությունները»: (5:1)

Այն խստորեն դատապարտում է դավաճանությունը և ուխտադրժությունը.

« Եվ լրացրեք ուխտերը, քանի որ ուխտի մասին կհարցնեն»: (17:34)

Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

« Յուրաքանչյուրի համար, ով խախտում է իր ուխտը, կլինի դրոշ Դատաստանի Օրը և կասեն որպես նրա ստորացում բոլոր արարածների առջև.«Սա է ապացույցը դավաճանության այսինչի և այնինչի»»: (Մուսլիմ)

«« Ամենազոր Ալլահն ասաց. «Ես կվիճեմ ընդդեմ երեք տեսակ մարդկանց Դատաստանի Օրը. Անձի, ով ուխտ է արել Իմ Անունով և այնուհետ խախտել է այն; և անձի, ով վաճառել է ազատ մարդուն և այնուհետ յուրացրել է նրա գինը; և անձի, ով աշխատող է վարձել և չի տվել նրա վճարը, այն բանից հետո, ինչ նա ձեռք է

բերել նրանից լիարժեք կերպով »»: (Ալ-Բուխարի)

Իսլամը փարիսությունը համարում է անհավատարմություն, որը առաջացնում է Ալլահի բարկությունը և պատիժը Հետագա Կյանքում:

Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն ) ասաց.

«Նա, ով ունի հետևյալ չորս բնութագրերը փարիսեցի է; և յուրաքանչյուրը, ով ունի դրանցից մեկը, փաստորեն ունի փարիսության գիծը, մինչ նա դադարում է; երբ նրան վստահում են որևէ բան, նա ապացուցում է անազնվություն; երբ նա խոսում

է, նա ստում է; երբ նա ուխտ է կնքում, նա խախտում է այդ և երբ նա վիճում է, նա վարվում է շատ հանդուգն, վիրավորող կերպով»: (Ալ-Բուխարի և Մուսլիմ)

## ՀԱՇՏՈՒԹՅՈՒՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ

Իսլամը իր հետևորդներին խրախուսում է հաշտեցնել տարբերությունների բոլոր խնդիրները և գնալ երկխոսության, հող նախապատրաստել խաղաղ, ներդաշնակ հասարակության համար: Նույնպես, այն կոչ է

անում հաշտեցնել երկու հակամարտող կողմերը.

«Հավատացյալները ոչ այլ ինչ են, քան եղբայրներ: Այսպիսով, հաշտեցրեք ձեր եղբայրներին»: (49:10)

« Այսպիսով, վախեցեք Ալլահից և հարմարեցրեք ձեր միջի բոլոր տարբերակիչ խնդիրները»: (8:1)

Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

« Երկու մարդկանց հաշտությունը բարեգործական գործողություն է»: (Ալ-Բուխարի և Մուսլիմ)

ՊԱՏՎԻՐԵԼ ԲԱՐԻՔ և ԱՐԳԵԼԵԼ ՉԱՐԻՔ

Պատվիրել առաքինություն և արգելել չարիքը էական դեր է խաղում հասարակության վերականգնման գործում ընդհանուր առմամբ և հանդիսանում է չարիքի ոչնչացման արդյունավետ գործիք: Իսլամը կոչ է անում իր հետևորդներին ջանք չխնայել լրացնելու իրենց պարտականությունները և օգնել մեկը մյուսին համբերատար կանգնել հանուն ճշմարտության և սասանել կոռուպցիայի անհաստատության միջինը, անկամայականությունը և հոգևոր լճացումը: Ղուրանը ասում է.

« Եվ, թող ձեզանից բարձրանան մարդկանց մի խումբ, ովքեր բոլորին կհրավիրեն այն բանին, ինչ բարիք է, պատվիրելով այն, ինչ ճիշտ է և կարգելեն այն, ինչ սխալ է: նրանք մեկն են, ովքեր ձեռք են բերում երանություն»: (3:104)

Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

« Ով հրավիրում է մարդկանց ձևավորել առաջնորդություն, ունենում է իր պարգևը ինչպես նաև պարգևը բոլոր նրանց, ովքեր գործում են դրա համար,առանց նվազեցնելու իրենց պարգևը և ով հրավիրում է չարիքի,կրում է դրա մեղքը այնպես, ինչպես մեղքերը

բոլոր նրանց, ովքեր գործում են դրա համար, առանց ամենաքիչը նվազեցնելու այն մեղքերի բեռը»: (Մուսլիմ)

« Նա, ով առաջնորդում է առաքինության որևէ ձևի, կունենա միևնույն պարգևը, ինչպես նրանք, ովքեր գործում են հանուն դրա»: (Մուսլիմ)

Ղուրանը գովում է Մարհամեդկան համայնքը իր առաքինի բնույթի պահպանման համար.

« Դուք լավագույն մարդիկ եք, ովքեր բարձրացել են մարդկության բարիքի համար. Դուք պատվիրում եք ինչ ճիշտ է,

արգելում եք ինչ սխալ է և հավատում եք Ալլահին»: (3:110)

Եթե այս Աստվածային պատվիրանները ժխտեն, անկասկած չարիքը կգերակշռի և երկուսն էլ, ճշմարիտները և մոլորվածները կդատապարտվեն Ալլահի բարկությանը: «Իսրայելի Զավակների» մասին Ղուրանը ասում է.

« Նրանք, Իսրայելի Զավակների միջից, ովքեր չեն հավատացել, անիծվել են Դավիթի լեզվով և Հիսուսի, Մարիամի որդու: Այդ այն պատճառով, որ նրանք չհնազանդվեցին և դիմակայեցին անզսպությամբ: Նրանք

չարգելեցին միմյանց անարդարամտությունը, որը նրանք գործում են:Չարիքը, իրոք այն էր, ինչ նրանք գործեցին»: (5:78-9)

Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) արադրել է շատ գեղեցիկ առակ այս մասին.

« Նրանց նմանությունը, ովքեր հետևում են Ալլահի սահմանած սահմաններին և նրանք, ովքեր ոտնահարում են դրանք համահավասար է այն մարդկանց խմբին, ովքեր մտնում են նավը շատ նետվելուց հետո:Նրանցից ոմանք վերին տախտակամածին էին և ոմանք ստորին տախտակամածին: Երբ նրանք,

ովքեր ստորին տախտակամածին էին պահանջում են ջուր, նրանք գնում են նրանց մոտ, ովքեր վերին տախտակամածին էին և ասում նրանց. «արդյո՞ք մենք կարող ենք անցք բացել առանց վնասելու վերին տախտակամածի խմբին: Եթե նրանք, ովքեր վերին տախտակամածին էին թույլ տան նրանց իրագործել իրենց մտադրությունը, նրանք կանհետանան; սակայն, եթե թույլ չտան նրանց այդպես գործել, նրանք բոլորը կփրկվեն»»: (Ալ-Բուխարի)

Իսլամը Մահմեդականներին պատվիրում է ըստ իրենց հնարավորությունների, հետևել

այս Աստվածային պատվիրաններին: Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

« Ով ձեզանից որևէ բան սխալ է տեսնում, նա պետք է փոխի այն իր ձեռքով, այսինքն գործողությամբ կամ արարքով; եթե նա չի կարող, թող նա փորձի փոխել այն իր լեզվով; եթե նա չի կարող, ապա թող նա փորձի փոխել այն իր սրտով, այսինքն, ցուցադրելով զգացմունքներ կամ անհավանություն և բողոք և այս Հավատքի նվազագույն աստիճանն է»: (Մուսլիմ)

Պարզել Հաշվետվությունների Ճշտությունը

Իսլամի մեկ այլ արժանի գեղեցկությունը այն է, որ իր հետևորդներին պատվիրում է պարզել հաշվետվությունների ճշտությունը, որպեսզի նրանք անարդար չլինեն միմյանց նկատմամբ.

« Ով դուք, ովքեր հավատացել եք. Եթե չար անձը կամ ստախոսը ձեզ մոտ է գալիս որևէ նորությամբ, տարբերակեք, որպեսզի չվնասեք մարդկանց ակամա և այնուհետ զղջաք այն բանի համար, ինչ դուք արել եք»: (49:6)

« Եվ մի հետևեք, այսինքն մի ասեք կամ արեք, կամ վկայեք և այլն, այն բանի մասին, ինչ դուք

տեղյակ չեք, անհատը ասում է 'Ես տեսել եմ' մինչդեռ փաստորեն նա ոչինչ չի տեսել, կամ 'ես լսել եմ' մինչդեռ, փաստորեն նա ոչինչ չի լսել: Իրոք, լսողությունը, տեսողությունը և սիրտը – այս բոլորին կկանչեն հաշվի»: (17:36)

## ԲՆՈՒՅԹԸ ԻՐ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԴՐՍևՈՐՄԱՄԲ

Իսլամը կոչ է անում լինել առաքինի և առաատորեն պարգևատրում է նրանց, ովքեր հետևում են: Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

« Հավատացյալները կատարյալ Հավատքով նրանք են, ում բնույթը լավագույնն է և ձեզանից

լավագույնները նրանք են, ովքեր լավագույնն են իրենց կանանց նկատմամբ»: (Աթ-Թիրմիզի)

Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

« Հավատացյալը կարող է հասնել նրանց աստիճանին, ովքեր ներկայացնում են գիշերային լրացուցիչ աղոթքներ և հետևում են լրացուցիչ պահքի, որպես իրենց լավ բնույթի արդյունք»: (Աբու Դաուդ )

« Ինձ ամենամոտ և ամենասիրելին ձեր միջից Դատաստանի Օրը նրանք են, ովքեր լավագույն բնույթն ունեն և ամենանողկալին ինձ և ամենահեռուն ինձանից

Դատաստանի Օրը ճոռոմ, գոռոզ, պարծենկոտ և ամբարտավան մարդիկ են»: (Աթ –Թիրմիզի)

Թվում է, թե Մարգարեն (Խ.Ո.Ա.Ն) եկել է միայն լրացնելու ամենառաքինի գծերը: Ինչպես նա ասաց.

«Իրոք, ինձ միայն ուղարկել են լրացնելու ամենաառաքինի բնույթի գծերը»: (Ալ-Բուխարի)

Բոլոր կրոնական պարտականությունները, ինչպիսիք են աղոթքը, պահքը և ուխտագնացությունը մտադրված են սնուցել լավ բնույթը: Ղուրանը ասում է.

«Քանի որ Հաջը հայտնի ամիսներ են: Եթե որևէ մեկը վերցնում է այդ պարտականությունը, թող չլինի ոչ մի լկտիություն, ոչ էլ թուլություն, ոչ էլ վիճաբանություն Հաջի ժամանակ: Եվ ինչ բարիք, որ դուք գործում եք, համոզված եղեք Ալլահի տեղյակ է: Եվ վերցրեք պաշար ձեզ հետ ճանապարհորդության համար, սակայն լավագույն պաշարը ճիշտ վարքն է»: (2:197)

«Ընթերցեք ինչ եկել է Գրքից, որպես ներշնչանք ձեզ և հաստատեք կանոնավոր աղոթք, քանի որ աղոթքը թույլ չի տալիս

ամոթալի և չար արարքները»: (29:45)

Մարգարեն ( Խ.Ա.Ո.Ն) ասաց.

««Եթե ձեզնից մեկը պահք է պահում, նա չպետք է կիրառի անպարկեշտ լեզու կամ վարվի հիմարաբար և հիմանդագին; և, եթե որևէ մեկը կռվում կամ գայթակղում է նրան, նա պետք է ասի."Ես պահք եմ պահում, ես պահք եմ պահում»»: (Ալ-Բուխարի և Մուսլիմ)

«Ով ձեռնպահ չի մնում սուտ ճառերից և գործողություններից պահքի ընթացքում, Ալլահը նրա կարիքը չունի, որպեսզի նա թողնի

իր սնունդը և ըմպելիքը»: (Ալ-Բուխարի)

## ՄԵԾԱՀՈԳՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՏՈՒՑՈՒՄ ԿՈՒՆԵՆԱ

Ղուրանը ասում է.

«Եվ այն, ինչ դուք վատնում եք բարիքի համար, ձեզ համար է, երբ դուք չեք վատնում բացառությամբ փնտրելով Ալլահի Դեմքը; և ինչ բարիք դուք վատնում եք, այն կհատուցվի ձեզ լիակատար և դուք չեք սխալվի»: (2:272)

« Եվ ինչ որ դուք վատնում եք բարիքի համար, իրոք Ալլահը լավ տեղյակ է դրան»:(2:273)

Մի մարդ հարցրեց Մարգարեյին (Խ.Ա.Ո.Ն) «Իսլամում ո՞ր արարքն է լավագույնը»: Նա պատասխանեց «Կերակրել կարիք:ավորին և ողջունել բոլորին, անկախ դու ծանոթ ես նրանց ,թե ոչ»: ( Ալ-Բուխարի և Մուսլիմ)

Ջեբիրը (Խ.Ա.Ո.Ն) Մարգարեյի Ուղեկցորդներից մեկը, ասաց.

«Ալլահի Մարգարեն Խ.Ա.Ո.Ն երբեք չի ասել 'ոչ' որևէ մեկին, ով նրան որևէ բան է խնդրել»: ( Ալ-Բուխարի և Մուսլիմ)

ԱՅԼՈՑ ՀԱՄԱՐ ՍԻՐԵԼ ԱՅՆ, ԻՆՉ ԴՈՒ ՍԻՐՈՒՄ ԵՍ ՔԵԶ ՀԱՄԱՐ

Իսլամը իր հետևորդներին կոչ է անում ցանկանալ մյուսների համար այն, ինչ նրանք ցանկանում են իրենց համար և վերաբերվել նրանց նույն կերպ, ինչպես նրանք ցանկանում են, որ իրենց վերաբերվեն:Ղուրանը իրական հավատացյալների համար ասում է.

«Եվ նրանք նախապատվությունը տալիս են իրենցից, նույնիսկ չնայած աղքատությունը իրենց սեփականն է»: (59:9)

Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն )ասաց.

«Ձեզանից ոչ ոք չի համարվի իրական հավատացյալ, մինչ նա չսիրի իր եղբոր համար այն, ինչ

նա սիրում է իր համար»: (Ալ-Բուխարի )

Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

« Մտրուկը ձեռք չի բերի կատարյալ Հավատքի վիճակ, մինչ նա չվայելի երեք բնութագիր. Ծախսել Ալլահի ուղղում աղքատության ժամանակ, վերաբերվել մյուսներին արդարությամբ, նույնիսկ եթե այն դեմ լինի իրեն և տալ խաղաղության ողջույն, այսինքն Աս-Սալամու Ալեյքում»:

«Ով ունի ավելի քան մեկ վերարկու, պետք է առաջարկի այն նրան, ով չունի; ով ունի

հավելյալ սնունդ, պետք է տա նրան, ով ոչինչ չունի»: (Մուսլիմ)

Այս պատման հաղորդողը ասաց, որ Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) շարունակեց նշել բոլոր տեսակի դրույթները, մինչ մենք կարծեցինք, որ մեզանից ոչ որ չունի որևէ իրավունք որևէ լրացուցիչ բաների, որոնք մենք ունենք:

## ՊԱՇՏՊԱՆԵԼ ՄՅՈՒՍՆԵՐԻ ՊԱՏԻՎԸ

Իսլամը յուրաքանչյուր Մահմեդականի պարտքն է համարում պաշտպանել իր եղբոր պատիվը, ունեցվածքը և արյունը, իրենց բացակայության

ընթացքում, այնքան որքան հնարավոր է: Աբուլ-Դարդան, հռչակավոր Պատումների հաղորդողը, զեկուցեց, որ մի մարդ չարաշահեց մյուսին նրա բացակայության ընթացքում և մեկ այլ մարդ, ով այնուհետ ներկայացրեց պաշտպանություն վերջինիս:Հետևյալին Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն), ով նույնպես վկա էր միջադեպին ասաց.

«Նա, ով պաշտպանում է իր եղբոր պատիվը, Դատաստանի Օրը Ալլահը հեռու կպահի Դժոխքի Կրակը նրա դեմքից»: (Աթ-Թիրմիզի)

# ՄԵԾ ԱՐԺԱՆԻՔ և ՀԱՄԲԵՐԱՏԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐԳևԸ

Իսլամը իր հետևորդներին հուշում է պահպանել համբերատարություն և հաստատակամություն երեք դեպքում. Համբերություն և հաստատակամություն, երբ կատարում են Ալլահի պատվիրանները, համբերատարություն, երբ մեծ ջանքեր են գործադրում խուսափելու Ալլահի արգելքներից համբերատարություն, երբ վշտացած են դժբախտությունից:

Այստեղ համբերատարությունը ենթադրում է մի շարք բաներ, ներառելով համբերատարությունը հիմնավոր կերպով այլ ոչ թե հապճեպ:Ունենալ համբերատարություն, հաստատակամություն, կայունություն, սկզբունքայնություն,նպատակի հաստատակամություն և ուրախ վերաբերմունք հրաժարության դժբախտության մեջ կամ տառապանքի, ի տարբերություն տրտունջի կամ ամպստամբության: Լինել համբերատար և հաղթահարել պասիվությունը և անտարբերությունը

համբերատարությամբ և կայունությամբ: Համբերատարությունը և Սալաթը, աղոթքը, ծայրահեղ օգտակար են դժբախտության և վշտի ժամանակ: Ղուրանը ասում է.

«Եվ փնտրեք Ալլահի օգնությունը համբերատարությամբ և համբերատարությամբ և Սալաթով, աղոթքով»: (2:45)

Իսլամում համբերատարությունը ծայրահեղ մեծ արժանիք է և Ալլահի հետ դրա պարգևը անսահման է:Ղուրանը ասում է.

«Եվ եղեք համբերատար համբերության մեջ; քանի որ

իրոք, Ալլահը չի դիմակայի կորցնելու առաքինիների պարգևը»: (11:115)

«Եթե դուք պահպանեք համբերատարությամբ և հետևեք ողջախոհությամբ,- ապա այն իրոք մեծ վճռականության խնդիր է»: (3:186)

## ՀԻԳԻԵՆԱՆ ԿՅԱՆՔԻ ԲՈԼՈՐ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ

Իսլամի ուսմունքների առավել մոտ հայացքը կբացահայտի, որ այն կոչ է անում հիգիենայի, կյանքի բոլոր ոլորտներում:

Իր հետևորդներին Իսլամը կոչ է անում գործածել իրենց աջ ձեռքը

անվելուց և ըմպելուց, որովհետև ձախ ձեռքը բացառապես օժանդակում է այնպիսի բաներին, ինչպիսին է բնական կանչից հետո պետքարանում մաքրվելը:տվյալ հիասքանչ սովորությունը տեղյակ է պահում անընդհատ, թե որ որ ձեռքը օգտագործել և ինչ պայմաններում:

Հիգիենայից դրդված Իսլամը արգելում է որոշակի սնունդ: Ղուրանը ասում է.

« Նա, Ալլահը արգելել է ձեզ միայն սատկած միս և արյուն և խոզի միս և այն ամենը, որին վկայակոչել են այլ անուն, բացի Ալլահից»: (2:173)

«Արգելված է ձեզ սննդի համար, սատկած միս, արյուն, խոզի միս և այն, որի վրա չի վկայակոչվել Ալլահի անունը, այն, որին սպանել են պայքարի ընթացքում, կամ ուժգին հարվածով, կամ գահավեժ անկումով, կամ պոզահարված, որի մի մասը կերել են վայրի կենդանիները, քանի դեռ դուք ի վիճակի չեք մորթել այն, պատշաճ կերպով մահից առաջ....» (5:3)

Եթե կենդանին մահանում է պայքարի արդյունքում կամ բռնի հարվածով կամ գահավեժ անկմամբ, կամ պոզահարվում է, կամ վայրի կենդանու հարձակման արդյունքում, ենթադրվում է, որ այն դառնում է

գիշակեր, քանի որ կենդանական արդյունքը սառեցվել է մինչ մարմնից դուրս գալը:

Ամեն դեպքում, եթե կենդանական արյունը դեռ հոսում է և մորթի հանդիսավոր եղանակով Ալլահի Անունով դուրս է գալիս, որպես սնունդ այն դառնում է թույլատրելի:

Գիշակերը և սատկած միսը և արյունը որպես սննդի բաժին բնականորեն գարշելի է: Խոզի միսը ունի ավելի շատ յուղ, քան մկանային կառույցով նյութ, առաջին միսը, որ սրտաբանները արգելում են մարդկանց, ովքեր ուտում են, այն դադարեցնելն է

:Այն ավելի հավանական է հիվանդությանը, քան այլ տեսակի միսը, այսինքն, տրիխինոսիսը, որը բնութագրվում է մազանման որդերի մկանային հյուսվածքից:[19]

Մաքրությունը ոչ միայն «մոտ է աստվածայինին» սակայն նույնպես, «Հավատքի կեսն է», ինչպես պարզորոշ հայտնել է Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն): Աղոթքները անվավեր են առանց Վուդույի, Լվացման: Լվացումը ենթադրում է մարմնի այն մասերի լվացումը, որոնք սովորաբար ենթակա են կեղտի կամ փոշու, որոնք են դեմքը, թևերը և ոտքերը:

Լվացումը դառնում է անվավեր բնության կանչի, քնի և սեռական գործողության արդյունքում: Ղուսլ, լոգանքը ենթադրում է ամբողջ մարմնի լվացումը, երազախաբության, սեռական հարաբերության, կանանց ամսեկանների շրջանի ավարտի և ետծննդաբերության արյունահոսության դեպքում, որի առավելագույն ժամանակաշրջանը համարվում է քառասուն օրը:Մաքրության կարևորությունը և օգտակար արդյունքները, որոնք պարտադիր են Մահմեդականների համար, բյուրեղյա պարզ են, եթե մենք հիշենք, որ նրանք պետք է ներակայցնեն լվացում իրենց

աղոթքներից առաջ: Ալլահը սիրում է նրանց, ովքեր հետևում են մաքրությանը.

«Ալլահը սիրում է նրանց, ովքեր շրջվում են դեպի Նա մշտապես և Նա սիրում է նրանց, ովքեր իրենց պահում են անարատ և մաքուր»: (2:222)

## ՉԱՐԻՔԻ ԱՐԳԵԼՔՆԵՐԸ

### ԱՆԱՌԱԿՈՒԹՅՈՒՆ և ԴԱՎԱՃԱՆՈՒԹՅՈՒՆ

Իսլամը արգելում է անառակությունը, դավաճանությունը և բոլոր անօրինական գործողությունները, որոնք

ուղղորդում են դրան, ինչպիսիք են վավաշոտ հայացքները և մասնավոր հանդիպումները: Այն պատվիրում է դավաճանների քարկոծումը, անառակների խարազանումը և հրապարակայնորեն համասեռամոլների սպանությունը, նպատակ ունենալով պահպանել մարդկանց պատիվը, բարոյական արժեքները: Պարկեշտության խրախուսանքը և ողջախոհությունը և հասարակության պահպանումը ընդհանուր առմամբ, դեմ են բարոյական վատթարացմանը և ծայրահեղ կործանմանը:

Կապված այս խնդրի հետ, հայտնի ասացվածքը «Կանխարգելումը ավելի լավ է, քան բուժումը» Իսլամում գտնում է լիարժեք շրջանակ: Քանի որ Իսլամը վերցնում է բոլոր անհրաժեշտ կանխարգելիչ միջոցառումները, պահպանելու Մահմեդական հասարակության բարոյական արժեքները այլասերումից: Ղուրանը արգելված է համարում է յուրաքանչյուր գործողություն, որը առաջնորդում է զզվելի արարքների: Ղուրանը ասում է.

«Եվ մի մոտեցեք անառակության; քանի որ այն անվայել արարք է և չարիքի ուղղի»: (17:32)

Մեկնաբանելով այս Տարբերակը, Յուսեֆ Ալին գրում է.

«Անառակությունը ինքն իրեն ոչ միայն ամոթալի է և անհամատեղելի որևէ ինքնահարգանքով կամ մյուսների նկատմամաբ հարգանքով, այլև այն ուղղի է բացում շատ չարիքների համար:Այն կործանում է ընտանիքի հիմքը. դեմ է գործում ծնված կամ ծնվելիք երեխաների հետաքրքրություններին; այն կարող է պատճառ հանդիսանալ սպանությունների և թշնամանքի և ունեցվածքի և հեղինակության կորստի և նույնպես մշտապես նեղացնում է հասարակության

կապերը:Դրանից պետք է ոչ միայն խուսափել որպես մեղք,այլև ետ մնալ յուրաքանչյուր մոտեցումից կամ գայթակղությունից»:[20]

ՎԱՃԽԱՌՈՒԹՅՈՒՆ

Իսլամը արգելում է վաշխառությունը ամենաամուր հնարավոր պայմանները, ի շնորհիվ բազմաթիվ հասարակական հիվանդությունների ձգանի: Իսլամական արժեքների համակարգում, վաշխառուական արժեքները ներկայացնում են հայտնի անարդարացված առավելության աղբյուր: Ղուրանը

իր հետևորդներին արգելում է սխալմամբ ձեռք բերել միմյանց ունեցվածքը.

« Եվ մի կերեք մեկը մյուսի ունեցվածքը անարդար կերպով, ոչ էլ կաշառեք դատավորներին, մինչ ձեր գործի ներկայացումը, որպեսզի դուք ի վիճակի լինեք ուտել մեղսաբար ուրիշների ունեցվածքի մասը»: ( 2:188)

Վաշխառությունը ներկայացնում է անօրինակաբար մյուսների ունեցվածքի կորզման ամենաբարձրագույն ձևը: «Այն ոչ միայն մեծ անարդարության աղբյուր է, այլ նաև աղբյուրների սխալ տեղակայություն, անկայուն

աճ, տնտեսական անկայունություն և մի շարք այլ տնտեսական խնդիրներ»:[21]

Իսլամը նպատակ ունի հաստատել արդարություն և արմատախիլ անել շահագործումը իր բոլոր ձևերով: Վաշխառուական գործարքները նույնպես փչացնում են մարդկային հարաբերությունները ի շնորհիվ վնասի, որ նրանք պատճառում են պարտատերներին: Նրանք նույնպես զարկ են տալիս ոչ-արդյունավետ մարդկանց խմբին, ովքեր ոչ մի օգուտ չեն տալիս իրենց հասարակությանը: Մինչդեռ օրինական առևտուրը

կամ արդյունաբերությունը, որը պատվիրում և խրախուսում է Ղուրանը, աճեցնում է բարգավաճումը և մարդու և ազգերի կայունությունը:Վաշխառության կախվածությունը որոշակիորեն խրախուսում է անպտուղ, դաժան մակաբույծների և եսասեր մարդկանց մշակույթը, ովքեր ավելի շատ վնասում են իրենց հասարակությունները, քան բարիք են տալիս: Ղուրանը ասում է.

«Նրանք, ովքեր վաշխառություն են կորզում, չեն կանգնի, բացառությամբ ինչպես կանգնում է մեկը, ում Սատանան իր

հպումով խելագարության է հասցրել:Այդ այն պատճառով է, որ նրանք ասում են, «Առևտուրը նման է վաշխառության,» սակայն Ալլահը թույլատրել է առևտուրը և արգելել վաշխառությունը: Նրանք, ովքեր, իրենց Տիրոջ զգուշացումը ստանալուց հետո, դադարեցնեն, կներվեն անցյալի համար; իրենց դեպքը Ալլահի համար է, դատելու; սակայն նրանք, ովքեր կրկնեն հանցանքը Կրակի բնակիչներն են; նրանք կբնակվեն այնտեղ»: (2:275)

«Ալլահը կզրկի վաշխառությունը ամեն օրհնանքից, սակայն կավելացնի բարեգործության արարքները; քանի որ Ալլահը չի

սիրում որևէ անշնորհակալ մեղսագործի»: (2:276)

«Ով դուք, ովքեր հավատացել եք: Վախեցեք Ալլահից և դադարեք ինչ մնում է ձեզանից պահանջել վաշխառության համար, եթե դուք իրոք հավատացյալներ եք: Եթե դուք չանեք այդ, հաշվի առեք պատերազմը Ալլահից և Նրա Մարգարեյից, սակայն, եթե դուք զղջաք, դուք կունենաք ձեր մեծ գումարները: Մի գործեք անարդար և ձեզ չեն վերաբերի անարդար կերպով»: (2:278 -9)

## ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐ

Իսլամը արգելում է բոլոր տեսակի ոգելից խմիչքները և պիտակում է

դրանք որպես « բոլոր չարիքի արմատի», ի շնորհիվ այն չարիքի, որ նրանք պատճառում են:
Ղուրանը ասում է.

« Ով դուք, ովքեր հավատացել եք, հարբեցուցիչները և խաղամոլությունը, քարերի զոհաբերությունը և հմայությունը սլաքներով Սատանայի ձեռագրի զազրանք են. խուսափեք այսպիսի զազրանքներից, որպեսզի դուք ի վիճակի լինեք բարգավաճել»: (5:90)

Արգելելով ամեն տեսակի հարբեցուցիչները, Իսլամը նպատակ ունի արարելու պատասխանատու և վստահելի

հասարակություն, զուրկ կախվածություններից:Այն ցանկանում է, որ հասարակության բոլոր անհատները պահպանեն իրենց չափավորությունը և մտքի իմաստությունը, պահպանեն իրենց ունեցվածքը աննպատակ և անչափ ծախսերից և պաշտպանեն իրենց մաքրությունը և բարի բնույթը:

Նրանք, ովքեր կախված են այսպիսի արհամարհելի ոգելից խմիչքներից, կլինեն առաջինները, ովքեր կզղջան: Եթե նրանք շարունակեն իրենց չար գործողությունները, որոնք բացասաբար են ազդում

հասարակության վրա, նրանք այնուհետ կենթարկվեն հասարակական խարազանի պատժի, որը ծառայում է որպես ամենի կանխարգելիչ:

## ԱՆԲԱՐՈՅԱԿԱՆ ՎԱՐՔ

Իսլամը լիովին արգելում է տղամարդուն ընդօրինակել կնոջը և հակառակը, կամ արտաքինով կամ վարքով: Հակառակ սեռի հագուստի, շարժումների կամ խոսելաձևի նմանակումը, անկասկած բացահայտ խոտորում է, ինչ ճիշտ է և բնական: Շատ հասարակությունների մեջ քաղաքակրթության և

զարգացման անվան տակ տվյալ տեսակի այլասերման ձևերը ձգում են բազմաթիվ հասարակական, բարոյական և ֆիզիկական հիվանդություններ:

Իսլամը ցանկանում է, որ իր հետևորդները հավատարիմ լինեն առաքինի սկզբունքներին, որը թելադրում է մաքուր բնույթը:Քանի որ մարդուն արարել են Մահմեդական, այլ կերպ, անմեղ, մաքուր, ճշմարիտ և ուղղված դեպի ճիշտը և արժանին: Այլասերման ցանցը, որը գերիշխում է միջավայրում, որտեղ անհատը ծնվում է, ազդում է Իսլամի տվյալ բնական մաքրությանը և շեղում է նրան

դրանից, դարձնելով կեղտոտ, կեղծ, ով ձգտում է սխալի և վնասի:Այն շեղում է երկրպագել Մեկ Ճշմարիտ Աստծո:Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասում է.

««Յուրաքանչյուր երեխա ծնվում է Ֆիթրահով, կամ բնույթի մաքուր վիճակով, այսինքն Մահմեդական: Նրա ծնողներն են, ովքեր փոխում են նրան Հրեայի, Քրիստոնյայի կամ Մոգերի: Ընթերցիր, եթե դու ցանկանում ես Տարբերակը. «Այսպիսով, ուղղիր քո դեմքը դեպի Իսլամական Միաստվածության մաքուր կրոնը, որի բնույթով Ալլահը արարել է մարդկությունը.

Մի թողեք որևէ փոփոխություն Ալլահի կրոնի մեջ: Այն ուղիղ կրոնն է, սակայն մարդկության մեծամասնությունը տեղյակ չէ»»: (30:30)

Իսլամը եկել է բուժելու աղավաղումը և վերականգնելու մարդկային բնույթը իր ճիշտ և բնական ուղղության:

ԽՈՒՍԱՓԵԼ ԲԱՆԵՐԻՑ, ՈՐՈՆՔ ՊԱՏԱԾ ՉԵՆ

Մահմեդականը չպետք է ներգրավվի որևէ բանի մեջ, որը իրեն չի վերաբերվում:Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն )ասաց.

«Անհատի լավ Հավատքի նշանն է, որ նա չի ներգրավվում այն բանի մեջ, որը շահեկան չէ նրան»: (Ա Թ -Թիրմիզի)

Ամեն դեպքում, թվում է, որ շատ Մահմեդականներ ժխտում են հրահանգը, որը ընդգծում է այս գեղեցիկ ասացվածքը:Եթե նրանք գործեին ըստ այս Հադիսի, Պատման, նրանք անշուշտ կխուսափեին շատ խնդիրներից, վեճերից և բանավեճերից:

ԽԶԵԼ ԱՐՅՈՒՆԱԿՑԱԿԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Իսլամի մեկ այլ գեղեցիկ տեսակետը այն է, որ այն

խստորեն արգելում է արյունակցական կապերի փոխհարաբերության խզումը:
Ղուրանը ասում է.

«Եվ վախեցեք Ալլահից, որի միջոցով դուք պահանջում եք ձեր ընդհանուր իրավունքները և մի խզեք փոխհարաբերությունները արգանդի, այսինքն ազգակցական»: (4:1)

Սրա հետ կապված Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

« Անհատը, ով խզում է ազգակցական կապերը չի մտնի Դրախտ»: (Ալ-Բուխարի)

« Նա, ով հավատում է Ալլահին և Վերջին օրվան, պետք է միանա փոխհարաբերությունների կապերին»: (Ալ-Բուխարի և Մուսլիմ)

## ԱՅԼ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԱՐԱՏՆԵՐ

Նույնպես, Իսլամը արգելում է բամբասանքը, զրպարտությունը, լրտեսությունը, սուտը, դավաճանությունը և բոլոր նմանատիպ արհամարհելի գծերը: Գոյություն ունեն դրանց բազմաթիվ հղումներ Ղուրանի և Սուննայի, Մարգարեյի սովորույթի մեջ: Ահա դրանցից մի քանիսը:

Ղուրանը ասում է.

« Ով, դուք, ովքեր հավատացել եք, թող ոչ մի մարդ ձեր միջից չծաղրի մյուսին, կարող է այնպես լինել, որ վերջինս ավելի լավն է, քան նախորդը; ոչ էլ թող կինը ծաղրի մեկ այլ կնոջ; կարող է ստացվել, որ վերջինս ավելի լավն է, քան նախորդը, ոչ էլ անարգել մեկը մյուսին, ոչ էլ վիրավորել մեկը մյուսին մականուններով: Վատ է իրոք, չար հեղինակությունը Հավատքի խոստովանությունից հետո; և նրանք, ովքեր չեն զղջում, սխալվողներ են: Ով, դուք, ովքեր հավատացել եք. խուսափեք կասկածից այնքան, որքան հնարավոր է; քանի որ կասկածը

որոշ պարագաներում մեղք է: Եվ մի լրտեսեք, ոչ էլ բամբասեք միմյանցից: Արդյո՞ք ձեզանից որևէ մեկը կցանկանա համտեսել իր հանգուցյալ Մահմեղական եղբոր մարմինը: Իհարկե, դուք կատեք այդ: Եվ վախեցեք Ալլահից: Իրոք, Ալլահը Հաճախ Վերադարձող և Բարեգութն է»: (49:11,12)

« Իրոք, Ալլահը պատվիրում է ձեզ ետ մատուցել վստահությունը նրանց, ովքեր իրավունք ունեն»: (4:58)

« Մի օգնեք միմյանց մեղքի և ճնշման մեջ»: (5:2)

Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն )ասաց.

«Մի լքեք միմյանց, մի սնուցեք ատելությունը միմյանց նկատմամբ, մի նախանձեք միմյանց, և եղեք, Օվ Ալլահի ստրուկներ, իրական եղբայրներ:Թույլատրելի չէ Մահմեդականին դադարել խոսել իր Մահմեդական եղբոր հետ ավելի քան երեք օր»: ( Ալ-Բուխարի և Մուսլիմ)

«Անհատը, ով զրպարտում է, չի մտնի Դրախտ»: (Ալ-Բուխարի և Մուսլիմ )

«Բավական է մարդու համար ապացուցել իրեն ստախոս, երբ նա շարունակում է հաղորդել, ինչ նա լսում է»: (Մուսլիմ)

«Իրական Մահմեդականը մեկն է, ում լեզվից Մահմեդականները ապահով են»: (Ալ-Բուխարի և Մուսլիմ)

«Զգուշացեք նախանձից, որովհետև նախանձը կործանում է արժանիքները, ճիշտ այնպես, ինչպես կրակը կործանում է փայտը»: (Աբու Դաուդ)

«Զգուշացեք կասկածից, քանի որ կասկածը ավելի վատ է, քան կեղծ հեքիաթները»: (Ալ-Բուխարի և Մուսլիմ)

«Բավական չարիք է Մահմեդականի համար թերագնահատել իր

Մահմեդական եղբորը»: (Մուսլիմ)

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Սրանք Իսլամի գեղեցկության մի քանի օրինակներ են:Իսլամը ազատագրեց ազգեր, անգութ Արաբներին միմյանց ճնշելուց, միավորեց նրանց աստիճանները, զտեց նրանց վարվելաձևերը, բաժանեց նրանց չարիքից, փոխեց նրանց քաղաքակիրթ և զարգացած ազգի, այն բանից հետո, երբ նրանք մասնատվել էին քաղաքացիական և ցեղային թշնամանքից և տարաձայնություններից:Երբ նրանք իրենց լիովին նվիրեցին

Ճշմարտությանը և կանգնեցին դրա կողքին, իրենց կայսրությունը ծնվեց մի քանի տարիների ընթացքում և Իսլամը գերագույն իշխեց ամենուր:Ղուրանը ասում է.

« Եվ հիշեք երախտագիտությամբ Ալլահի Շնորհը ձեզ; քանի որ դուք թշնամիներ էիք և Նա միացրեց ձեր սրտերը սիրով, այնպես, որ Իր Շնորհով դուք դարձաք եղբայրներ: Եվ դուք Կրակի փոսի եզրին էիք և Նա փրկեց ձեզ դրանից:Ուստի, Ալլահը Իր Նշանները պարզ է դարձրել, որպեսզի դուք ի վիճակի լինեք առաջնորդվել»: (3:103)

«Հիշեք, երբ դուք փոքր խումբ էիք, թույլ կարծելով երկրի մեջ և վախենալով, որ մարդիկ կարող են հափշտակել և առևանգել ձեզ; սակայն Նա տվեց ապահով վայր ձեզ, հզորացրեց ձեզ Իր օժանդակությամբ և տվեց ձեզ լավ բաներ կենսապահովման, որպեսզի դուք երախտապարտ լինեք»: (8:26)

Իսլամի թշնամիները մոտեցան դրան և ընդունեցին այն գիտակցաբար կամ անգիտակցաբար, որովհետև այն ճշմարտություն է Ալլահից: Իրենց հայտնագործությունները, գիտությունը և տեխնոլոգիան միայն ծառայում է վկայել, որ

Իսլամը վեր է որևէ կասկածի ստվերից ,որպես իրական կրոն:

Ղուրանը ասում է.

«Շուտով Մենք ցույց կտանք նրանց Մեր նշանները տիեզերքում և իրենց մեջ, մինչ այն կդառնա հայտարարություն նրանց, որ սա ճշմարտությունն է: Արդյո՞ք բավարար չէ, որ ձեր Տերը վկայում է ամենը»:( 41:53)

Լինելով ճշմարիտ կրոն Ալլահից, Իսլամը երբեք չի նվազի, անկախ նրա դեմ ուղղված բոլոր հարձակումների: Նրա Աստվածային լույսը կշարունակի լուսավորել մարդկանց սրտերը և հոգիները, բաժանելով նրանց

չարիքից և տարածելով արդարություն և գութ: Ղուրանը ասում է.

« Իրենց մտադրությունն է հանգցնել Ալլահի Լույսը իրենց բերաններով:Սակայն Ալլահը կլրացնի Իր Լույսը, չնայած նույնիսկ այն բանի, որ անհավատները կարող են ատել այդ»: (61:8 )

Ղուրանը նկարագրում է հանգուցյալի և կենդանի մարդու պարզ տարբերությունը.

«Այսպիսով, իրոք, դուք չեք կարող ստիպել հանգուցյալին, այսինքն անհավատներին, լսել, ոչ էլ դուք կարող եք ստիպել խուլին լսել

կոչը, երբ նրանք ցուցադրում են իրենց մեջքը և շրջվում: Ոչ էլ դուք կարող եք ետ ուղղորդել կույրին իրենց մոլորությունից:Դուք կարող եք ստիպել լսել միայն նրանց, ովքեր հավատում են Մեր նշաններին և ենթարկվում են իրենց կամքը Իսլամին»: (30:52-3)

« Արդյո՞ք կարող է նա, ով մահացած է, որպես իր անհավատության արդյունք, և Մենք տվել ենք նրան կյանք, Հավատք և դարձրել նրա համար լույս, որով նա քայլում է մարդկանց միջև, լինել նրա նման, ով խավարի խորքերում է, անհավատության ,որտեղից նա չի կարող դուրս գալ»: (6:122)

Ընդհանուր առմամբ, Ալլահի արարածների հրաշքները կարելի է գիտակցել յուրաքանչյուրից, ով ունի ունակություն, թույլատրելու այսպիսի գիտելիքը թափանցել իր միտքը: Սակայն, եթե մարդիկ ելնելով կամակորությունից, սպանեն այդ ունակությունը, որը Ալլահն է տվել նրանց, ինչպե՞ս են կարող նրանք այնուհետ հասկանալ: Ինչպե՞ս կարող է ճշմարտությունը հասնել այսպիսի մարդկանց, ովքեր շրջում են իրենց մեջքը և համառորեն մերժում են հրահանգված լինել: Չնայած, թվացյալ, նրանք ունեն պատճառաբանության և ըմբռնման բոլոր ունակությունները, նրանք

այնքան են մեռցրել դրանք, որ այդ ունակությունները չեն գործում և նրանք գնում են գահավեժ Դժոխք.

«Շատ են ջիները և մարդկությունը Դժոխքի համար. Նրանք ունեն սրտեր, որով նրանք չեն հասկանում, աչքեր, որոնցով նրանք չեն տեսնում և ականջներ, որոնցով նրանք չեն լսում,- ոչ նույնիսկ ավելի մոլոր: Նրանք անփույթ են»: (7:179)

---

[1] Ալ-Ասբաթ տերմինը վերաբերում է Հակոբի

տասներկու զավակների ժառանգներին:

[2] Խուրշիդ Ահմեդ, Իսլամ, Հիմնական Սկզբունքները և Բնութագրերը, Իսլամական Հիմնադրամ, Լեյսեսթեր, Միացյալ թագավորություն, 1974թվ. Էջ. 6

[3] Ապրող Աշխարհի Պատմությունը, Սքոթ Ֆորսման և Ընկերություն, 1990 թվ. Էջ. 191-2

[4] Համուդահ Աբդալաթի. Իսլամը Կենտրոնում. Ամերիկյան Վստահության Հրատարակչություն էջ. 95

[5] Իսլամի Սուրը, WAMY, Իսլամի թողարկումները N 13, էջ.4 & 5

[6] Իբիդ էջ. 6

[7] Իսլամ – Մեր Ընտրությունը. Հակիրճ հրատարակություն 1992 կազմված և վերնագրված Իբրահիմ Ֆ. Բավանիից, էջ. 21-22

[8] Իբիդ էջ.30-31

[9] Իբիդ էջ. 106

[10] Իբիդ էջ. 105

[11] Իբիդ էջ. 49-50

[12] Մեկնաբանված է Իսլամի Սուրը աշխատությունից էջ. 6

[13] Իբիդ էջ. 7

[14] Իբիդ էջ. 6

[15] Իբիդ էջ. 6

[16] Իբիդ էջ. 6

[17] Իբիդ էջ. 4

[18] Մորիս Բուքեյլ, Աստվածաշունչ, Ղուրանը և Գիտությունը Ամերիկյան Հրատարակչություն, 1979 էջ. 110-1

[19] Տես Յուսեֆ Ալի, Սուրբ Ղուրան, Իմաստների և Թարգմանություն և Մեկնաբանություն, 1990 թվ. Էջ.69

[20] Յուսեֆ Ալի. Սուրբ Ղուրան.Իմաստների և Մեկնաբանությունների Անգլերեն թարգմանություն; Արքա Ֆահդի Սուրբ Ղուրանի հրատարակման Համալիր 1990թվ. Էջ. 785-6

[21] Մ. Ումար Չափրա. Դեպի Արդար Գումարային Համակարգ, Իսլամական Հիմնադրամ 1985թվ. Էջ. 56